



# ԳԼՈՒԲՈՒՄ



*ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ  
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ*

1

ԵՐԵՎԱՆ

2009

# ԳԼՈՒԲՈՒՍ

## ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Թիվ 1, 2009

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

#### **Սևակ Սարուխանյան**

Հայ-իրանական հարաբերությունները և Իրանի տարածաշրջանային  
էներգետիկ ու տրանսպորտային նախագծերը ..... 3

#### **Միխայիլ Աղաջանյան**

Ուրանի հանքերը՝ գլոբալ մրցակցության  
և տարածաշրջանային կայունության գործոն..... 15

#### **Գարեն Վերանյան**

Մինչև 2030թ. Ռուսաստանի էներգետիկ ռազմավարության հայեցակարգը ..... 24

#### **Մարգիտ Հարությունյան**

Թուրքիա. էներգետիկ միջազգային հանգույց դառնալու հեռանկարը ..... 39

#### **Մերգեյ Մինասյան**

Հայաստանի արտաքին քաղաքականության մի քանի  
հայեցակարգային հիմքեր ..... 53

#### **Մերգեյ Մարկեղոսով**

Ռուսաստան-Հայաստան. երկկողմ հարաբերություններում պրագմատիզմի շուրջ ..... 63

**ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ԻՐԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ  
ՈՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԸ**

***Մեակ Սարուխանյան***

Հայ-իրանական հարաբերությունները վերջին տարիներին թևակոխել են ակտիվ զարգացման փուլ, ինչն արդյունք է այն բանի, որ միջպետական համագործակցության մեջ տնտեսական նշանակության ծրագրերի իրականացումը կարևոր նշանակություն է ձեռք բերել: Հայաստան-Իրան գազատարը, որի շինարարական աշխատանքներն արդեն ավարտվել են, տնտեսական համագործակցության միայն մի մասն է: Հայաստանի տարածքում նավթավերամշակման գործարանի կառուցումը, Հայաստան-Իրան երկաթգծի շինարարությունը կարող են նոր լիցք հաղորդել միջպետական հարաբերություններին: Միևնույն ժամանակ, այս ծրագրերի իրականացումը չի կարող զուտ հայ-իրանական հարաբերությունների մաս հանդիսանալ: Դրանց իրագործումն անմիջականորեն կապված է Իրանի տարածաշրջանային և որոշ առումներով՝ գլոբալ ռազմավարության հետ, որն ունի հստակ քաղաքական և տնտեսական բաղադրիչներ: Հողվածում դիտարկվում են այդ ռազմավարության՝ էներգետիկ և տրանսպորտային ոլորտներին առնչվող հարցեր, քննվում է դրանց նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար:

***Էներգետիկ քաղաքականություն***

***Իրան-Հայաստան գազատար***

Ժամանակակից Իրանի էներգետիկ քաղաքականությունը հիմնված է երկու առանցքային սկզբունքների վրա.

- արդիականացնել պետությանը պատկանող էներգետիկ համակարգը, քայլեր ձեռնարկել նավթի և գազի արտահանման և վերամշակման բարձր մակարդակ ապահովելու համար,

- օգտագործել նշանակալից նավթային և գազային ռեսուրսները՝ տարածաշրջանում և գլոբալ հարթությունում սեփական քաղաքական և տնտեսական դիրքերի ամրապնդման համար:

Եթե ուշադիր դիտարկենք Իրանի էներգետիկ քաղաքականության բաղկացուցիչ մաս կազմող համագործակցությունն օտար երկրների և ընկերությունների հետ, ապա վերջինը դրականորեն է զարգանում միայն այն պայմաններում, երբ միաժամանակ բավարարում է վերը նշված երկու սկզբունքներին: Այստեղ կարելի է նշել թե՛ ֆրանսիական և թուրքական ընկերությունների մուտքը «Հարավային Փարս» նավթավայր, թե՛ Չինաստանի ազգային նավթային ընկերության համար Իրանում ստեղծված հատուկ պայմանները, թե՛ այն, որ վերջին տարիներին Իրանը վերածվել է Իրաք էլեկտրաէներգիա հիմնական արտահանողի՝ այն պայմաններում, երբ իսլամական հանրապետությունն ինքը էլեկտրաէներգիայի արտադրման և ներկրման հետ կապված խնդիր ունի:

Ներկայումս Իրանի համար կարևորագույն խնդիր է գազի հսկայական պաշարների<sup>1</sup> արտահանման հնարավորությունների ստեղծումը: Այս խնդրի լուծման համար աշխատանքները տարվում են երկու հիմնական ուղղություններով.

1. միջազգային ներդրումների ապահովում «Հարավային Փարս» հանքավայրի մշակման աշխատանքներ իրականացնելու համար՝ միաժամանակ պահպանելով պետական սեփականությունը հանքավայրի նկատմամբ,
2. միջազգային էներգակիրների շուկա իրանական գազի մուտքի ապահովում՝ պահպանելով վաճառող-գնորդ անմիջական կապը և տարանցող երկրի նվազագույն ազդեցությունը գազի արտահանման գործում<sup>2</sup>:

Հայաստանի համար այս երկու ուղղություններից ամենակարևորն, իհարկե, պետք է համարել երկրորդը, քանի որ այն անմիջականորեն կապված է Հայաստան-Իրան գազատարի գործունեության հետ: Գազատարի

<sup>1</sup> Իրանը տիրապետում է համաշխարհային գազի պաշարների 16 տոկոսին, իսկ արտահանման հնարավոր ծավալներն, ըստ տարբեր աղբյուրների, կարող են կազմել տարեկան 80-120 մլրդ խմ:

<sup>2</sup> Իրանի նման դիրքորոշմամբ է պայմանավորվել մինչև վերջերս Թուրքիայի հետ էներգետիկ համագործակցության բավական ցածր մակարդակը, քանի որ Թուրքիան ջանում էր վերածվել ոչ միայն իր տարածքով ուղղակի տարանցում ապահովող երկրի, այլ նաև իրանական գազը վերավաճառողի:

կառուցման մասին պայմանագրի ստորագրումից հետո Հայաստանում բավական շատ էին շահարկումներն այն մասին, որ իրանական կողմը նպատակ ունի օգտագործել Հայաստանի տարածքը և Հայաստան-Իրան գազատարը Վրաստան և ԵՄ գազ արտահանելու նպատակով: Երբ ակնհայտ դարձավ, որ կառուցվելիք գազատարի հզորությունը բավարար չէ նման նպատակի իրականացման համար, խոսակցություններ տարածվեցին, թե գազատարը փոքր հզորությամբ է կառուցվում զուտ ռուսական կողմի (որը ցանկանում է խափանել իրանական գազի մուտքը եվրոպական շուկա) ճնշման պատճառով:

Ակնհայտ է, որ 2003-2004 թվականներն ամենաակտիվն էին Իրանի և ԵՄ-ի միջև էներգետիկ հարցերին նվիրված բանակցություններում: Մակայն դրանց արդյունքում, առնվազն այն մասով, որը մամլո ասուլիսների և մամուլի հաղորդագրությունների միջոցով ներկայացվեց հասարակությանը, Հայաստանի կամ Հարավային Կովկասի՝ որպես իրանական բնական գազի արտահանման տարածքի, մասին խոսք անգամ չի եղել: Հայաստան-Իրան գազատարի երկարացման և հզորության ավելացման մասին միակ կոնկրետ առաջարկությունը եղել է 2005-ին, երբ Իրանի էներգետիկայի նախարարը հայտարարեց, որ Թեհրանը Երևանին, Թբիլիսիին, Մոսկվային և Կիևին առաջարկել է ստեղծել համատեղ միջգերատեսչական հանձնաժողով՝ Իրանից Ուկրաինա գազատարի կառուցման հարցերի քննարկման և նախնական որոշումներ ընդունելու նպատակով: Հանձնաժողովը մինչ օրս չի ստեղծվել և գործողություններ կամ քննարկումներ գազատարի երկարացման կամ հզորացման մասին չեն եղել: Հաշվի առնելով Իրանի շարունակվող մեկուսացումը՝ Վրաստանի կողմից սեփական էներգետիկ անվտանգությունն ապահովելու համար բավարար գազի ստացումը Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարից, այսօր խոսել Հայաստան-Իրան գազատարի երկարացման մասին չի կարելի:

Միևնույն ժամանակ, վերջին ամիսների զարգացումները Իրանի և Թուրքիայի հարաբերություններում խոսում են այն մասին, որ, հավանաբար, Թուրքիայի տարածքը և, մասնավորապես, «Նաբուկո» գազատարն Իրանի կողմից կօգտագործվի գազը ԵՄ արտահանելու նպատակով: Ակնհայտ է, որ վերջին շրջանում Թուրքիան փորձում է հատուկ ընդգծել Իրանի դերը Եվրոպայի էներգետիկ անվտանգության ապահովման հարցում: Հունվարի 13-ին ելույթ ունենալով Բրյուսելի Եվրոպական քաղաքականության կենտրոնում՝ Թուրքիայի վարչապետ Ռ.Էրդոգանը հայտարարեց, որ «Նաբուկո» նախագիծը կարող է իմաստ ունենալ միայն այն դեպքում, եթե դրանով գազ մղվի Եվրոպա ոչ միայն Ղազախստանից, Թուրքմենստանից և Ադրբեջանից, այլև Իրանից:

Թուրք-իրանական էներգետիկ համագործակցության ակտիվացման մասին քննարկումներն սկսվել են դեռևս տարեսկզբին, իսկ դրանց համար հիմք է հանդիսացել Իրանի խորհրդարանի խոսնակ Ալի Լարիջանիի այցն Անկարա, որի արդյունքում Իրանի և Թուրքիայի էներգետիկայի նախարարներին պաշտոնական հանձնարարական է տրվել՝ ակտիվացնել բանակցությունները գազի ոլորտում համագործակցության խորացման և ընդհանուր նախագծերի իրականացման վերաբերյալ: Դեռևս 2001 թվականին կառուցված Թավրիզ-Էրզրում գազատարը բավական լավ հիմք է ստեղծում «Նաբուկո» նախագծին Իրանի միանալու համար:

Այս գազատարով Իրանից Թուրքիա վերջին տարիների ընթացքում տարեկան արտահանվել է միջինը 8 մլրդ խմ գազ, այն պայմաններում, երբ գազատարի հնարավորությունները թույլ են տալիս եռակի ավելացնել արտահանվող գազի ծավալները:

Հարավային Կովկասում օգոստոսին տեղի ունեցած իրադարձություններից հետո, երբ հասկանալի դարձավ այն, որ Վրաստանը՝ որպես էներգակիրների տարանցիկ երկիր, անհուսալի է, Հարավկովկասյան գազամուղին (*Բաքու-Թրիխսի-Էրզրում*) Թուրքմենստանի և Ղազախստանի միանալու հնարավորությունը կտրուկ նվազել է: Այսօր Ադրբեյջանը, փաստորեն, միակ մերձկասպյան երկիրն է, որը պատրաստ է դառնալ «Նաբուկո» նախագծի մասնակիցը՝ ոչ թե թղթի վրա, այլ գործնականորեն: Ոչ Թուրքմենստանը, ոչ Ղազախստանը նախագծին միանալու ոչ մի քայլ չեն արել և մոտակա տարիներին դժվար թե անեն: Այս պայմաններում Անկարայի համար հասկանալի է դարձել, որ «Նաբուկո» նախագծի իրականացման և անհրաժեշտ ֆինանսական ու քաղաքական դիվիդենդներ ստանալու համար անհրաժեշտ է այս ծրագրում ներառել նաև բնական գազի զգալի պաշարներ ունեցող Իրանին: Նման գիտակցում կա նաև Եվրոպայում՝ քաղաքական և տնտեսական ակտորների մակարդակով: Բուդապեշտյան գազաթաժողովին Իրանի հետ համագործակցության զարգացման անհրաժեշտության մասին հայտարարեցին «Նաբուկո» գազատարի նախագծի իրականացման աշխատանքներին ընդգրկված մասնավոր ընկերությունների ղեկավարները, այդ թվում՝ նախագծի հեղինակ և հիմնական լոբբիստ, ավստրիական *OMV Gas & Power GmbH* ընկերության փոխնախագահ Ջ.Բոգարդը:

Նշենք մի կարևոր փաստ. «Նաբուկո» նախագծի պաշտոնական [www.nabucco-pipeline.com](http://www.nabucco-pipeline.com) կայքում 2009թ. հունվարին տեղադրվել է նախագծի նոր քարտեզը, որը ցույց է տալիս, որ գազատարի մի ճյուղը մտնում է Իրանի տարածք (տե՛ս քարտեզը):

Հիմնական դժվարությունները, որոնք կարող են առաջանալ «Նաբուկոյին» Իրանի միանալուց, կապված են Վաշինգտոնի դիրքորոշման հետ,

քանի որ ամերիկյան նոր վարչակազմը, չնայած տարբեր բնույթի վերլուծություններին, դեռևս չի մշակել և ներկայացրել սեփական «իրանական քաղաքականությունը»: Սակայն իրանա-ամերիկյան հարաբերությունների կարգավորման համար այսօր բավական լավ հիմքեր կան, մանավանդ եթե հաշվի առնենք այն դժվարությունները, որոնք Վաշինգտոնի համար կծագեն դրդական «Մանասից» ռազմակայանի դուրսբերման պայմաններում: Սա Կենտրոնական Ասիայում ուժերի վերադասավորում կառաջացնի, որն անմիջականորեն կազդի նաև Իրան-ԱՄՆ հարաբերությունների վրա:



Բացի վերը նշված զարգացումներից՝ կարելի է նշել նաև, որ Թուրքիայի տարածքն Իրանի համար գազը ԵՄ արտահանելու այլընտրանք չունի: Իրանական գազի համար դեպի Եվրոպա աշխարհագրական առումով ամենակարճ ճանապարհը լինելով՝ Թուրքիան իր քաղաքական աշխարհագրությամբ նույնպես ամենահարմար ճանապարհն է, քանի որ ապահովում է գազի փոխադրումը ԵՄ՝ հատելով ընդամենը 1 երկրի տարածք, ինչը չի կարելի ասել Հարավային Կովկասով անցնող ճանապարհի մասին:

Սակայն սա չի նշանակում, թե Հայաստան-Իրան գազատարը հզորացման տեղ և անհրաժեշտություն չունի և չի ունենա: Հայաստանի իշխա-

նությունների ընդունած որոշումը էներգետիկ համակարգը զարգացնելու, այդ թվում 1000-1500 մվտ նոր ատոմակայան կառուցելու վերաբերյալ վկայում է այն մասին, որ Հայաստանը գնում է կարևոր էլեկտրաարտադրական հանգույցի վերածվելու ճանապարհով: Այս քաղաքականությունը կարող է հաջողություն ունենալ այն դեպքում, եթե հայ-թուրքական քաղաքական երկխոսությունը միջպետական հարաբերություններում բերի տնտեսական և, մասնավորապես, էներգետիկ ոլորտին առնչվող զարգացումների: Խոսքն առաջին հերթին վերաբերում է էլեկտրաէներգիայի արտահանմանը Թուրքիա, որի արևելյան շրջանները էլեկտրաէներգիայի բավական մեծ պահանջարկ ունեն:

Մեծ է նաև Հայաստանից Իրան էլեկտրաէներգիայի արտահանման հզորությունների ավելացման հնարավորությունը, սակայն իրանական շուկան Հայաստանի համար երկարաժամկետ տեսանկյունից չի կարելի միանշանակ առաջնային համարել, քանի որ Իրան-Արևմուտք հարաբերությունների բարելավման արդյունքում Իրանի էներգետիկ սեկտոր արտասահմանյան ներդրումների հոսքը, միջուկային ծրագրի զարգացումը, նոր ՋԷԿ-երի կառուցումը վաղ թե ուշ էներգակիրներով հարուստ Իրանը էլեկտրաէներգիայի տեսանկյունից կդարձնեն ինքնաբավ պետություն:

Փաստորեն, այսօր Իրան-Հայաստան գազատարի հզորացման հեռանկարներն ուղղակիորեն կապված են հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հեռանկարների հետ:

### **Նավթավերամշակում և նավթատար**

Ինչ վերաբերում է Իրանի նավթային սեկտորին և հայ-իրանական համագործակցությանը նավթային ոլորտում, ապա խնդիրներն այստեղ բավականին շատ են: Դրանց՝ Իրանի հետ առնչվող հիմնական մասը կապված է հետևյալ խնդիրների հետ.

1. Իրանի տարածքում գործող 60 խոշոր նավթահորերից 40-ը մաշված կամ գերմաշված վիճակում են, ինչը մոտակա տարիներին բերելու է նավթի արտադրման ծավալների անկման,
2. Իրանի տարածքում գործող 4 խոշոր և 18 փոքր նավթավերամշակման գործարանները չեն կարողանում ապահովել Իրանում վերամշակված նավթամթերքների պահանջարկը, ինչի արդյունքում Իրանն այսօր տարվա ընթացքում օգտագործվող նավթամթերքների գրեթե 40 տոկոսը ներկրում է արտասահմանից՝ երկրի ներքին շուկայում սուբսիդավորման միջոցով պահպանելով նավթամթերքի և առաջին հերթին բենզինի ցածր գներ:



Երկրորդ կետում նշված խնդիրները թեև բարդություն են առաջացնում բուն Թեհրանի համար, միևնույն ժամանակ բավական կարևոր գործոն են Հայաստան-Իրան էներգետիկ համագործակցության զարգացման առումով: Խոսքն առաջին հերթին Հայաստանում նավթավերամշակման գործարանի կառուցման հնարավորության մասին է, ինչի առիթով առաջին հայտարարությունն արվեց Հայաստանի և Ռուսաստանի նախագահների կողմից 2007թ. սկզբին: Իրանի համար Հայաստանի հարավում նավթավերամշակման գործարանի կառուցման տնտեսական նպատակահարմարությունը կապված է իսլամական հանրապետության նավթավերամշակման ընդհանուր հիմնախնդրի հետ: Նավթավերամշակման հիմնական հզորություններն Իրանում ստեղծվել են 35-50 տարի առաջ և նպատակ են ունեցել ապահովել Իրանի վերամշակված նավթի պահանջները: Պարզ է, որ վերջին տասնամյակներին Իրանի նավթավերամշակման գործարանները մաշվել են թե՛ ֆիզիկապես և թե՛ բարոյապես: Արևմտյան ուղղակի էներգետիկ ներդրումների բացակայության պայմաններում ժամանակակից նոր գործարանների կառուցումն Իրանի տարածքում բարդ է, իրանցիներն իրենք չունեն վերամշակման ժամանակակից տեխնոլոգիաներ և հզորություններ, իսկ վերամշակված նավթի պահանջն Իրանում աճում է, ինչը պայմանավորված է ոչ միայն երկրի տնտեսական զարգացմամբ, այլև նրանով, որ իսլամական հանրապետության բնակչությունն ավելի քան կրկնապատկվել է 40 կամ 50 տարի առաջվա համեմատ, երբ ստեղծվել էին վերամշակման գործարանները: Այսօր Իրանը հում նավթ արտահանող և վերամշակված նավթ ու բենզին ներկրող պետություն է: Իրանի ղեկավարությունը նպատակադրվել է առաջիկայում պայքարել այս իրավիճակի դեմ: Սակայն իրավիճակն օբյեկտիվ բնույթ է կրում և պայմանավորված է, ինչպես նշեցինք, վերամշակման հզորությունների և նոր տեխնոլոգիաների բացակայությամբ: Սեփական ուժերով Իրանում այդ հզորությունների ստեղծումը գրեթե անհնար է, իսկ արտասահմանյան ներդրումներ այս ոլորտում չեն արվում, քանի որ.

- արևմտյան ներդրողների համար երկրում գայթակղիչ տնտեսական պայմաններ չեն ստեղծված, իսկ միջազգային ասպարեզում առկա է հակազդեցություն ամերիկյան քաղաքական ներդրումներին իրանական նավթավերամշակման և ընդհանրապես նավթային ոլորտում,
- ամերիկյան վերահսկողությունից և ԱՄՆ-ից ուղղակի կախվածություն չունեցող միակ պետությունը՝ Չինաստանը (որը տիրապետում է անհրաժեշտ ֆինանսական միջոցների Իրանում վերամշակման գործա-

րանների ցանց կառուցելու համար), պարզապես շահագրգռված չէ դրանց ստեղծմամբ, քանի որ հետաքրքրված է Իրանից հում նավթ ստանալով, որի ծավալները կարող են կրճատվել, եթե իսլամական հանրապետությունը սեփական տարածքում զարգացնի նավթի վերամշակման ոլորտը:

Այս համատեքստում Իրանի համար բավական շահավետ պետք է երևա Հայաստանի տարածքում նավթավերամշակման գործարանի կառուցումը, որը, ըստ ամենայնի, կարող է հանդիսանալ ռուս-իրանական համատեղ նախագիծ: Չնայած վերամշակման գործարանը գտնվելու է Իրանի տարածքից դուրս, նրա աշխարհագրական դիրքը և ռուս-իրանական համատեղ ներդրումային բնույթը նվազեցնելու են հնարավոր տնտեսական և քաղաքական կորուստներն Իրանի համար: Իր հերթին, Իրան-Հայաստան երկաթգծի կառուցումը մեկ ընդհանուր գծով կմիավորի Իրանի երկաթուղին Հայաստանի երկաթուղու հետ, ինչը (եթե Մեդրին էլ միանա մեկ գծով Հայաստանի ընդհանուր երկաթուղային ցանցին՝ շրջանցելով Նախիջևանը) հնարավորություն կտա իսլամական հանրապետությանն ավելի ապահով և ձեռնտու ելք ապահովել դեպի Վրաստանի սնծովյան նավահանգիստներ:

2009-ի տարեվերջին Ռուսաստանի տրանսպորտի նախարար և Հայաստանի միջկառավարական հանձնաժողովի համանախագահ Ի.Լևիտինի հայտարարությունն այն մասին, որ Հայաստանում նավթավերամշակման գործարանի կառուցումը տնտեսապես շահավետ չէ, բավական բարդացնում է գործարանի կառուցումը: Սակայն այն չի վերանում ընդհանրապես, քանի որ Ի.Լևիտինի հայտարարությունը միայն վկայում է այն մասին, որ ռուսական ընկերությունները հազիվ թե մասնակցեն գործարանի կառուցման ծրագրին: Իհարկե, դժվար է գործարանի կառուցումը գերշահավետ համարել՝ մանավանդ հաշվի առնելով այն, որ Հայաստանը գտնվում է շրջափակման մեջ, Իրանում նավթամթերքների շուկան վերահսկվում է պետության կողմից և այդ պատճառով բիզնեսի համար այնքան էլ գրավիչ չէ, սակայն իրադրությունը կարող է զգալիորեն փոխվել, և նման փոփոխության համար կան երկու կարևոր պատճառներ.

- Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորումը և երկու պետությունների միջև սահմանների վերաբացումը Հայաստանում վերամշակված իրանական նավթի համար նոր շուկա կարող են ստեղծել,

- Ադրբեջանի իշխանությունները դեռևս անցած տարի որոշում են ընդունել փակել Բաքվի երկու նավթավերամշակման գործարանները, հնարավոր նման որոշման մասին են խոսում նաև Վրաստանի իշխանությունները: Բացառված չէ, որ 2 տարի հետո Հարավային Կովկասում չլինի գեթ մեկ նավթավերամշակման գործարան, ինչը կարող է նավթամթերքների արտադրման բիզնեսի և նոր գործարան կառուցելու համար ֆավական նոր, գայթակղիչ իրավիճակ ստեղծել:

Նավթավերամշակման գործարանի կառուցումը կարևոր է Հայաստանի համար ոչ միայն նրանով, որ կամրապնդվի երկրի էներգետիկ անվտանգությունը, այլ նաև նրանով, որ կկառուցվի Իրան-Հայաստան նավթատար և երկաթգիծ: 2008թ. դեկտեմբերի 22-ին Հայաստանի էներգետիկայի և բնական ռեսուրսների նախարար *Ա.Մովսիսյանի* հայտարարությունը, թե իրանական կողմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել մոտակա երկու տարիներին Իրանից Հայաստան վերամշակված նավթամթերքներ ներկրելու համար նավթատար կառուցելու շուրջ, կարող է ապագա նավթավերամշակման գործարանի կառուցման լավ հիմք ստեղծել<sup>1</sup>:

Միևնույն ժամանակ, նավթավերամշակման գործարանի կառուցման քննարկումներն արդեն իսկ ունեն իրենց, մեր կարծիքով, ամենակարևոր արդյունքը՝ կոնկրետ քննարկումների և Բանակցությունների թեմա է դարձել Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման հարցը, ինչը, միգուցե, շատ ավելի կարևոր է, քան էներգետիկ ոլորտում իրականացվող ծրագրերը:

### ***Տրանսպորտի ոլորտ***

Իրանն այսօր երկաթգծերի կառուցման ծավալներով աշխարհի առաջատարներից է: Վերջին մի քանի տարիների ընթացքում իրականացված խոշոր շինարարական նախագծերի շնորհիվ Իրանը ստեղծել է երկաթգծերի խոշոր մագիստրալային համակարգ, որն ընդհանուր երկաթգծային ցանցի մեջ է միացնում Թուրքիայի, Իրաքի և Թուրքմենստանի երկաթուղիները: Ստորև ներկայացված է Իրանի մագիստրալային երկաթուղիների քարտեզը<sup>2</sup>:

<sup>1</sup> Խողովակաշարի տրամագիծը հավասար կլինի 250 մմ-ի, երկարությունը՝ 300 կմ-ի: Նախագծի արժեքն է 200-240 մլն ԱՄՆ դոլար:

<sup>2</sup> Քարտեզի հեղինակային իրավունքները պատկանում են «Նորավանք» հիմնադրամին:



Սակայն ներկայումս Իրանն ուղղակիորեն ընդգրկված է մի քանի տարածաշրջանային նախագծերի իրականացման մեջ, որոնք կարող են էլ ավելի բարձրացնել Իրանի դերը որպես տարանցման և տրանսպորտային գոտի: Դրանք են.

1. 2008 թվականի մարտի 25-ին Դուշանբեում Իրանի, Տաջիկստանի և Աֆղանստանի արտաքին գործերի նախարարները հռչակագիր ստորագրեցին Իրան-Աֆղանստան-Տաջիկստան երկաթգծի կառուցման մասին, որը, հավանաբար, պետք է սկիզբ առնի իրանական Մաշադից և առայժմ ավարտվի Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանբեում: Համաձայն Տաջիկստանի արտաքին գործերի նախարար Խ.Ջարիխիի, երկաթգիծը հետագայում Դուշանբեից շարունակվելու է դեպի Դրոզդստան և Չինաստան, միևնույն ժամանակ ժամանակակից ավ-

տոճանապարհ է կառուցվելու Չինաստանից դեպի Իրանի՝ Պարսից ծոցում գտնվող Բանդեր-Աբբաս նավահանգիստ:

2. 2009թ. հունվարին դազախական մեջլիսում սկսվեցին լուսմներ դազախական Ուրենից Թուրքմենստանի տարածքով դեպի Իրան<sup>1</sup> (Կասպիցի մոտ գտնվող Գորգան քաղաք) երկաթգիծ կառուցելու ֆինանսավորման աղբյուրների որոնման վերաբերյալ: Նոր կառուցվելիք երկաթգիծը գործողից, որն անցնում է Ուզբեկստանի, Թուրքմենստանի տարածքով և միանում է իրանական Սերասի քաղաքին, մոտավորապես 600 կմ ավելի կարճ է լինելու, ինչը բերելու է բեռնափոխադրման ծավալների կտրուկ աճի: Այս նախագիծն ինչ-որ չափով հանդիսանում է մյուս՝ Ղազվին-Ռեշտ-Աստարա երկաթգծի մրցակիցը և կարող է Կենտրոնական Ասիայի տարածքով իրականացնել հյուսիսից հարավ կատարվող բեռնափոխադրումները: Իսկ այս բեռնափոխադրումների ծավալները գնալով աճում են: Համաձայն «ՌԺԴ» ընկերության նախագահ Վ.Յակունինի, 2007թ. համեմատ 2015թ. երկաթգծային բեռնափոխադրումները հյուսիսից հարավ, Ռուսաստան-Ադրբեջան-Իրան ուղու բացակայության պայմաններում անգամ, աճելու են 53 տոկոսով: Սակայն պարզ չէ, թե ինչպիսի աճ կարող է գրանցվել, եթե Ղազախստանը, Թուրքմենստանը և Իրանը կառուցեն նոր, ավելի կարճ և շահավետ երկաթգիծ: Երկաթգծի կառուցման քննարկումներն առաջնային տեղ են զբաղեցրել Թուրքմենստանի նախագահ Գ.Բերդիմուհամեդովի փետրվարի 13-15-ին Իրան կատարած պաշտոնական այցի ընթացքում: Հատկանշական է, որ Թուրքմենստանի նախագահի այցից ընդամենը մեկ օր առաջ Իրանում էր գտնվում նաև Վ.Յակունինը, որի այցի հիմնական նպատակն էր Ռուսաստանը, Ադրբեջանը և Իրանն իրար միացնող Ղազվին-Ռեշտ-Աստարա երկաթգծի կառուցման աշխատանքները սկսելու շուրջ բանակցությունները:
3. 2004 թվականից քննարկումների առարկա է Ղազվին-Ռեշտ-Աստարա երկաթգծի կառուցման հարցը: 2008թ. մարտին ստեղծված ռուս-

<sup>1</sup> Իրենց հերթին, Ղազախստանն ու Չինաստանն այսօր իրականացնում են երկու երկրներն իրար կապող երկաթգծի հզորացման աշխատանքներ: Դաստիկ (Չինաստան)-Ալաշանկոու (Ղազախստան) հատվածի բեռնափոխադրումների ավելացման համար ստեղծվել է հատվածի կառավարման և զարգացման միջպետական խորհուրդ: Փաստորեն, եթե կառուցվի Ղազախստան-Իրան նոր երկաթգիծը, այն իրար կմիացնի նաև Չինաստանն ու Իրանը, հնարավորություն կստեղծի դեպի Չինաստան (և Չինաստանից) ապրանքների ներկրման ու արտահանման համար՝ այդ նպատակով օգտագործելով Պարսից ծոցի իրանական Բանդեր-Աբբաս նավահանգիստը:

ադրբեջանա-իրանական կոնսորցիումը պետք է սկսեր շինարարական աշխատանքների իրականացումը, սակայն մինչև օրս իրանական և ադրբեջանական կողմերն այդ ուղղությամբ գրեթե ոչ մի քայլ չեն կատարել:

Առաջին երկու կետերը Հայաստանի համար շատ կարևոր պետք է համարվեն: Եթե դրանք իրականանան, ապա Հայաստանը կարող է կարճ երկաթուղային ճանապարհ ունենալ դեպի Կենտրոնական Ասիա և Չինաստան: Սրա համար կարևոր է, որ կառուցվի Հայաստան-Իրան երկաթգիծը, որը, իր հերթին, ուղիղ երկաթուղային կապ կստեղծի Չինաստանի և Սևծովյան նավահանգիստների միջև: Բացառված չէ, որ հենց այս հանգամանքն առաջնային դեր խաղա Հայաստան-Իրան երկաթգծի կառուցման համար ֆինանսավորման հայթայթման տեսանկյունից: Խոսքն առաջին հերթին Չինաստանի մասին է: ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հ.Աբրահամյանի՝ 2008թ. դեկտեմբերին Չինաստան կատարած այցի ժամանակ քննարկվել է նաև երկաթգծի կառուցման հարցը, որը, համաձայն պաշտոնական տեղեկատվության, բավական հետաքրքրել է չինական կողմին:

Իհարկե, համաշխարհային տնտեսական ճգնաժամն իր ազդեցությունը կունենա վերը նշված բոլոր նախագծերի վրա, սակայն դրանց իրականացումը կասեցնել չի կարող, քանի որ դրա համար շատ կարևոր տնտեսական նախադրյալներ կան: Հայաստանին բոլոր այս նախագծերը հնարավորություններ են տալիս քայլեր ձեռնարկել շրջափակումը հաղթահարելու և տարածաշրջանային ու համաշխարհային տնտեսությանն ինտեգրվելու համար:

## ՈՒՐԱՆԻ ՀԱՆՔԵՐԸ՝ ԳԼՈՒԲԱԼ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆ

### *Միխայիլ Աղաջանյան*

Համաշխարհային էներգետիկ շուկայի զարգացումը «խաղաղ ատոմի» հատվածում իր հրամայականներն է թելադրում արդեն հայտարարված հավակնոտ, երկկողմ և բազմակողմ նախագծերի իրականացման համար:

Անցած տարվա ընթացքում «խաղաղ ատոմի» շուկան աննախադեպ աճի ականատեսը դարձավ, սակայն այդ աճը մեծ մասամբ կրում էր հոչակագրային բնույթ: Այն, մի կողմից, դրսևորվել էր շահագրգիռ կողմերի էներգետիկ ատոմային հզորությունների զարգացման մտադրությունների արձանագրմամբ, մյուս կողմից՝ մի շարք համաշխարհային տերությունների՝ այդ մտադրությունները բավարարելու պատրաստակամության արտահայտմամբ:

2009-ը խաղաղ ատոմային տեխնոլոգիաներ արտադրող և ստացող երկրների հայտարարած հավակնությունների իրատեսության և նպատակահարմարության որոշակի թեստ կդառնա:

2008-2009թթ. սահմանագծին «խաղաղ ատոմի» միջազգային էներգետիկ հատվածում տեղի ունեցող վերջին իրադարձությունները վկայում են, որ այդ թեստը զգալի չափով կապված կլինի ատոմային տեխնոլոգիաներ արտադրող որոշ երկրների արդեն հայտարարած երկկողմ և բազմակողմ համագործակցության գոտուն անմիջապես մոտիկ գտնվող ուրանի հանքեր մուտք գործելու հնարավորությունների հետ: Եթե «խաղաղ ատոմի» շուկան զարգանում է, ապա այդ զարգացումն ապահովողներն ու բավարարողները չեն կարող չմտածել ուրանի համաշխարհային պաշարների նկատմամբ իրավունք ունենալու հեռանկարների մասին, մանավանդ որ, փորձագիտական գնահատականներով, մոտակա տարիներին հնարավոր է ուրանի մատակարարման դեֆիցիտ՝ համաշխարհային ատոմային ինդուստրիայի պահանջարկը բավարարելու համար:

Այսպես, Ղազախստանի փորձագետների 2006թ. գնահատականներով, մինչև 2012թ., ուրանի հումքի ընդհանուր դեֆիցիտը գլոբալ մասշտա-

բով կարող է աճել՝ հասնելով մինչև 16 հազար տոննա ուրանի<sup>1</sup>: Ուրանի դեֆիցիտը կհանգեցնի այդ հումքի գների աճի, որն արդեն ունեցել է իր «վերելքներն» ու «վայրէջքները»՝ ներկայում համեմատաբար կայունանալով մեկ ֆունտի համար մոտ \$50 նիշի վրա (բնական ուրանի համաշխարհային գինը հաշվարկվում է ստանդարտ անգլիական ֆունտի կշռի չափով, որը հավասար է 453,592374 գրամի):

Երկար ժամանակ ուրանի գները համաշխարհային շուկայում որոշվում էին ոչ թե արդյունահանման ինքնարժեքով, այլ մի շարք սպառող և արտահանող երկրներում ուրանի պահուստային պաշարների առկայությամբ: Այդ պաշարներն այնքան մեծ էին, որ տասնամյակներ շարունակ շատ երկրներ կարող էին պարզապես չմտածել միջուկային վառելիքի հնարավոր դեֆիցիտի մասին: Ցածր գների երկարատև պահպանումը հետևանքն էր դեռևս «սառը պատերազմի» տարիներին, սպառազինությունների մրցավազքի ժամանակ կուտակված պահուստային պաշարների իսպառ վաճառքի համաշխարհային շուկայում: Ժամանակին դա հանգեցրեց ուրանի գնի ռեկորդային նվազագույնին. մեկ ֆունտը՝ \$6,25 և, որպես հետևանք՝ ուրան արտադրողների զանգվածային սնանկացմանը: Չէ՞ որ այդ գինը ոչ միայն չէր ապահովում ներդրումների վերադարձը տվյալ ճյուղ, այլև, որպես բիզնես, հարցականի տակ էր դնում ուրանի արտահանումը:

Ուրանի գների ներկայիս աճը կապված է ոչ թե ուրանի իրական դեֆիցիտի, այլ այն բանի հետ, որ դա սպասվում է: Պահուստային պաշարների սպառման հետ մեկտեղ՝ ուրանի պահանջարկը կավելանա: Հաշվի առնելով հետագա տասնամյակներին սպասվող համաշխարհային էներգետիկայի անցումը վառելիքի ավանդական ձևերից առաջադեմ (շատ սպառողիչ համեմատություն է. 25 գրամ բնական ուրանի ամբողջական էներգիան հավասարագոր է 125 տոննա քարածխի արտադրած ջերմությանը) ձևերի, ինչպես նաև ատոմային էլեկտրակայանների թվի աճը, այդ գործընթացը կշարունակվի:

Եթե 2000թ. ուրանի մեկ ֆունտն արժեր մոտ \$7, ապա վերջին տարիներին տեղի ունեցավ գների գերիզույց թռիչք: Այսպես, 2007թ. կեսերին մեկ ֆունտ ուրանի խտածոյի գինը մոտեցավ ընդհուպ մինչև \$100-ի<sup>2</sup>:

Մեկ այլ, համաշխարհային մասշտաբով ամենապահանջված էներգառեսուրսի՝ նավթի ցածր գները չեն կարող հանգստացուցիչ հանգամանք լինել

<sup>1</sup> Ядерные горизонты Казахстана // Журнал “Континент” (Казахстан), № 7 (168), апрель 2006., <http://www.continent.kz/2006/07/5.htm>.

<sup>2</sup> Аждар Куртов, Урановый компонент в укреплении связей России и Казахстана, <http://www.fondsk.ru/article.php?id=726>, 12.05.2007.



այնպիսի «նորարար» և «գիտատար» տերության համար, ինչպիսին ԱՄՆ-ն է: Նավթի ցածր գներն առավել ևս չեն կարող ազդեցություն չգործել Ռուսաստանի ատոմային հզորությունների զարգացման վրա ինչպես իր տարածքում, այնպես էլ նրա արտաքին տնտեսական շահերի գոտիներում՝ հաշվի առնելով նշված շուկաներ դուրս գալու մեծ ներուժը հենց «խաղաղ ատոմի» զարգացման համաշխարհային պահանջարկի բավարարման միջոցով:

Գլոբալ էներգետիկ շուկայում ևս մեկ շահագրգիռ դերակատար՝ Եվրամիությունը, ձգտում է հետ չնսալ և առաջարկում է «խաղաղ ատոմի» համաշխարհային պահանջարկը բավարարելու սեփական մոտեցումները: Ընդ որում, դա արվում է ԵՄ աշխարհաքաղաքական շահերի հետ սերտորեն շաղկապված և Իրանի միջուկային փաթեթի հետ կապված ռիսկերը «մտքում ունենալու» պայմաններում: 2008թ. դեկտեմբերի 9-ին ԵՄ ընդհանուր արտաքին քաղաքականության և անվտանգության քաղաքականության հարցերով Գերագույն հանձնակատար Խ.Սոլանան հնչեցրեց միացյալ Եվրոպայի «միջուկային վառելիքի բանկ» ստեղծելու ծրագրերը՝ Եվրոպա նավթ ներմուծողների պահանջարկի երաշխավորված բավարարման և միջուկային վառելիքի հարստացման հարցի լուծումը կենտրոնացնելու համար: Խ.Սոլանայի խոսքերով՝ նման «բանկ» ստեղծելու ԵՄ ծրագրերը իրականացման օպերատիվ բնույթ ունեն (ժամկետը սահմանված է մինչև 2010թ.) և գնահատվում են մոտավորապես 25 մլն եվրո:

Որքանով են իրատեսական երկու առավել հզոր էներգատոմային տերություններ ԱՄՆ-ի և Ռուսաստանի՝ ուրանի համաշխարհային պաշարներից օգտվելու հնարավորությունները: Ակնհայտ է, որ մեզ, առաջին հերթին, պետք է հետաքրքրեն Ռուսաստանի հնարավորություններն այդ հարցում, քանի որ այն արդեն հասցրել է առնչվել Հայաստանի տարածքում գտնվող ատոմային, էներգետիկ և արդյունահանող հզորություններին:

Թեև Միացյալ Նահանգները էներգետիկ շուկայում ներքին, սեփական պահանջարկը բավարարելու համար որոշակիորեն կախված է ուրանի ներմուծումից և ինչպես մասնավորապես նշվում է Տնտեսական շուկաների ուսումնասիրման տեղեկատվական-վերլուծական «RNCOS» ընկերության 2008թ. նոյեմբերի զեկույցում (*Market Research Report «US Nuclear Energy Outlook»*), կարող է հետագայում բախվել ուրանի արտաքին հանքեր մուտք գործելու սահմանափակումների հետ, ասենք, օրինակ, Ռուսաստանի, Չինաստանի և Հնդկաստանի աճող պահանջարկի ֆոնին, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նշել, որ ուրանի համաշխարհային պաշարների նկատմամբ նրա հնարավորությունները պետք է դիտարկվեն նախընտրելի

դիրքերից: Նշենք միայն, որ ուրանի՝ տվյալ պահի դրությամբ հետախուզված և հաստատված խոշորագույն պաշարները գտնվում են այնպիսի անգլո-սաքսոնական երկրներում, ինչպիսիք են Ավստրալիան և Կանադան (ուրանի համաշխարհային պաշարների 23 և 8 տոկոսը՝ համապատասխանաբար)<sup>1</sup>, ինչը կարող է վստահություն ներշնչել այլ երկրների և, առաջին հերթին, ատոմային հավակնություններ ունեցող այնպիսի գերտերությունների, ինչպիսիք են ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան:

Դրա հետ մեկտեղ և այլ պետությունների համեմատ, Ավստրալիան և Կանադան ունեն զգալի առավելություններ արդյունահանված միջուկային վառելիքի թափոններն անվտանգ պահելու համար, որոնք արտահայտվում են հետևյալ աշխարհագրական, երկրաբանական և քաղաքական գործոններով. մեծ տարածքային մակերես և բնակավայրերից հեռու գտնվող անբնակ տարածությունների առկայություն, խոր հանքաշերտեր սեյսմակայուն լեռնային ապարներում, որտեղ թափոնները կարող են պահվել շրջակա միջավայրի համար վտանգ չներկայացնող պայմաններում, քաղաքական կայունություն<sup>2</sup>:

Ռուսաստանը և մասամբ Չինաստանը որոշակի դժվարություններ ունեն ուրանի հիմնական, իրենց համար արտաքին համաշխարհային հանքաշերտերից օգտվելու հարցում, ինչը ստիպում է նրանց լինել ավելի ակտիվ, իսկ երբեմն էլ դրսևորել առավել ագրեսիվ և մրցակցային աշխատանք՝ ապահովելու համար իրենց հասանելիությունը ուրանի հանքերից օգտվելու հարցում:

Եթե ԱՄՆ-ի համար ուրանի հանքերից օգտվելու իրավունքի հարցն ունի ավելի առևտրային բնույթ, ինչը դրսևորվում է ուրանի համաշխարհային գների հնարավոր աճի սահմանափակմամբ, ապա Ռուսաստանի և Չինաստանի նման երկրների համար այս հարցը ստանում է իրենց շուրջ ուրանի հանքաշերտեր մուտք գործելու նպաստավոր գոտի ստեղծելու աշխարհաքաղաքական երանգ: Կարելի է ենթադրել, որ այն նշանակությունը, որն ԱՄՆ-ի համար վերջին տասնամյակներին ունի նավթի արդյունաբերական հանքերից օգտվելու հարցը, այնպիսի երկրների համար, ինչպիսիք են Ռուսաստանը, Չինաստանը և Հնդկաստանը, կխաղա ուրանի հանքերից օգտվելու հարցը:

Դատելով Ռուսաստանի ատոմային էներգետիկայի ոլորտի պատաս-

<sup>1</sup> *Supply of Uranium*, <http://www.world-nuclear.org/info/inf75.html> (World Nuclear Association, June 2008).

<sup>2</sup> Sté u, օրինակ, *Alistair J Stephens*, *The Strategic Importance of Australia's Uranium Resources*, May 2005. p. 6., <http://www.aph.gov.au/house/committee/isr/uranium/subs/sub22.pdf>.

խանատուների հայտարարություններից՝ կարելի է ասել, որ Ռուսաստանն ապահովված է ուրանի սեփական պաշարներով առաջիկա 60 տարվա կտրվածքով: Միաժամանակ, երկրի ղեկավարությունն ընդունել է ռազմավարական որոշում՝ չվաճառել բնական ուրանի սեփական պաշարները համաշխարհային շուկայում<sup>1</sup>:

Նման որոշման համար օբյեկտիվ հիմնավորումներ կան, որոնցից մեկը Ռուսաստանում երկարաժամկետ հեռանկարում սպասվող բնական պաշարների, այդ թվում՝ ուրանի դեֆիցիտն է: Այսպես, ռուսաստանցի փորձագետների գնահատականներով՝ Ռուսաստանը բնական պաշարների 36 հիմնական տեսակների դեֆիցիտ կունենա: Հետագա 15 տարիների ընթացքում երկիրը կսպառի նավթի, գազի, կապարի հետախուզված պաշարները, պղնձի, մոլիբդենի, նիկելի, անագի, արծաթի, ցինկի պաշարների 75 տոկոսը, իսկ ոսկու և ադամանդի պաշարները կսպառվեն էլ ավելի արագ: Շատ ավելի մտահոգիչ է ուրանի պաշարների հեռանկարը<sup>2</sup>:

Արդեն այսօր Ռուսաստանում բնական ուրանի արտադրությունը կազմում է պահանջարկի մոտ 20 տոկոսը: Առայժմ դեֆիցիտը ծածկվում է դեռևս խորհրդային շրջանում կուտակված պահուստային պաշարների հաշվին: Մինչև 2010թ. կպահանջվի ավելացնել բնական ուրանի արտադրությունը՝ արտասահմանից գնվող տարեկան մինչև 7,5 հազ. տոննա ծավալներին գուզրնթաց, իսկ 2020թ. այդ աճը պիտի հասնի 14-15 հազ. տոննայի<sup>3</sup>:

Հարևան երկու տերությունների՝ Ռուսաստանի և Չինաստանի էներգետիկ հավակնությունների բավարարման և նախագծման ոլորտում ներկայում ընթացող պայքարում տեղ գտած փոքր-ինչ քողարկված, սակայն գոյություն ունեցող ինտրիգը մրցակցությունն է Կենտրոնական Ասիայի, մասնավորապես՝ Ղազախստանի ուրանի հանքերից օգտվելու խնդրում: Բոլորի համար, կարծես, սովորական է դարձել համաշխարհային և տարածաշրջանային տերությունների պայքարը «գազային Թուրքմենստանի», «նավթային Ղազախստանի» համար: Ամենայն հավանականությամբ, մոտակա տարիների հրատապ աշխարհաքաղաքականության տեղեկատվական դաշտում գործառնության մեջ կդրվի պայքար «ուրանային Ղազախստանի» համար հասկացությունը, որում հիմնական մրցակիցները կլինեն Ռուսաստանը և Չինաստանը:

<sup>1</sup> *Россия обеспечена собственными запасами урана на 60 лет вперед, но не будет торговать природным ураном – Кириенко*, <http://www.prime-tass.ru/news/show.asp?id=636667&ct=news.>, 02.11.2006.

<sup>2</sup> *Е. Козловский*, В России природопользование вырождается в браконьерство, [http://www.russia-today.ru/2006/no\\_05/05\\_continuation.htm.](http://www.russia-today.ru/2006/no_05/05_continuation.htm.), май 2006.

<sup>3</sup> *Аждар Куртов*, Ibid.

2008թ. նոյեմբերին «Ղազատոմարդ» ազգային ընկերությունն ատոմային էներգետիկայի ոլորտում ռազմավարական գործընկերության համաձայնագրեր ստորագրեց չինական «China Guandong Nuclear Power Company» (CGNPC) և «China National Nuclear Corporation» (CNNC) ընկերությունների հետ: Համաձայնագրերը նախատեսում են հանքերի համատեղ շահագործում Ղազախստանի տարածքում, ուրանի երկարաժամկետ մատակարարում Չինաստանին, չինական ատոմակայանների համար վառելիքի արտադրություն: Մասնավորապես, «CGNPC»-ը կստանա իր չափաբաժինները ղազախական հանքերի շահագործման համատեղ ձեռնարկություններում: «Իրկոլ»-ը՝ Կզըլ Օրդայի շրջանում (արտադրական հզորությունը՝ տարեկան 750 տոննա ուրան) և «Սեմիգրայ»-ը՝ Աքմոլի մարզում (տարեկան 500 տոննա), «CNNC» ընկերությունը՝ Հարավային Ղազախստանի շրջանի «Ժալպակ» հանքերը (հզորությունը՝ 750 տոննա):

Այսպիսով, Պեկինը ստանում է ատոմային էներգետիկայի զարգացման համար անհրաժեշտ հումքի աղբյուրներից օգտվելու ուղղակի հնարավորություն (Չինաստանի ուրանի հաստատված պաշարները գնահատվում են համաշխարհային պաշարների 1,5 տոկոսից էլ պակաս, սեփական արդյունահանումը 2007թ. կազմել է 870 տոննա և բավարարել է երկրի ընթացիկ պահանջարկի միայն կեսը):

Ղազախստանը (որը, սեփական գնահատականներով, ուրանի համաշխարհային հետախուզված պաշարների 19, իսկ արտասահմանյան գնահատականներով՝ 15 տոկոսն ունի) մտնում է ուրանի արդյունահանման համաշխարհային առաջատարների եռյակի մեջ: Ներկայում երկրում առկա է միայն միջուկային-վառելիքային ցիկլի տեխնոլոգիական շրթայի մի մասը: Դա բնական ուրանի արդյունահանումն է, աֆինաժը (առաջնային մաքրումը) և վառելիքային հաբերի արտադրությունը: Վառելիքային ցիկլի մնացած բոլոր օղակները գտնվում են Ռուսաստանի տարածքում:

Այսօր Ղազախստանը դիվերսիֆիկացնում է ուրանի սեկտորի շուկաները և գործընկերներին՝ ձգտելով նվազեցնել կախվածությունը Մոսկվայից<sup>1</sup>:

Ինչպես վերը նշվեց, Ռուսաստանի ատոմային էներգետիկայի զարգացման կարևոր խնդիրը ուրանով ապահովումն է: Ռուսաստանը պատրաստ է ընդլայնել ուրանային արտադրանքի մատակարարման աշխարհագրությունը, սակայն բնական ուրանի արդյունահանումը երկրում այսօրվա դրությամբ չի ապահովում նույնիսկ հայրենական ատոմային բնա-

<sup>1</sup> С.Смирнов, *Учебу оплатим ураном. Казахстан рвется на радиоактивный рынок Китая*, <http://www.centrasia.ru/newsA.php?st=1226922900>, 17.11.2008.

գավառի պահանջարկը: Հեռանկարում Ռուսաստանը պատրաստ է ուրան արդյունահանել նաև ամբողջ աշխարհում: «Մենք պատրաստ ենք ուրան արդյունահանել աշխարհի ցանկացած տարածքում, այնտեղ, որտեղ դա ձեռնտու է», - հայտարարում է Ռուսաստանի ատոմային ոլորտի ղեկավար Ս. Կիրիենկոն<sup>1</sup>:

Ամենայն հավանականությամբ, Ռուսաստանը որոշում է կայացրել Հայաստանի տարածքում ուրանի արդյունահանման շահավետության մասին, և 2007թ. գարնանից սկսած՝ Հայաստանի հետ համատեղ ձեռնարկություն ստեղծելու Մոսկվայի ջանքերն ակտիվացել են: Հանքախուզական աշխատանքները Հայաստանի տարածքում, որոնք նախատեսված է կատարել մինչև 2010թ., և դրանից հետո սկսել հնարավոր համաձայնագրի մանրամասների քննարկումները, սպասում են իրենց իրականացմանը:

2008թ. դեկտեմբերի կեսերի տվյալներով, ռուս-հայկական պայմանավորվածությունների շրջանակներում ստեղծված «Հայ-ռուսական լեռնահանքային ընկերություն» ՓԲԸ-ն մշակում է Հայաստանի տարածքում ուրանի և այլ օգտակար հանածոների հանքախուզական աշխատանքների նախագիծ: Որոնողական, գնահատման և հանքախուզական աշխատանքների կոնկրետ վայրերը կորոշվեն նախագծով և կձևակերպվեն ընդերքի օգտագործման արտոնագրով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության «Հայ-ռուսական լեռնահանքային ընկերություն» ՓԲԸ-ին հանքախուզական աշխատանքներ կատարելու իրավունքի հատուկ թույլտվություն տալու որոշումն ընդունելուց հետո: Այդ աշխատանքները նախատեսված է սկսել 2009թ. գարնանը:

Հայաստանի հետ ուրանի համատեղ արդյունահանման հետ կապված ռուսական շահերի նկատմամբ նոր մոտեցում կարող է ձևավորվել հաշվի առնելով Ռուսաստանի հավակնությունները Թուրքիայի «խաղաղ ատոմի» կրկին ձևավորվող շուկայում: Հնարավոր է, որ Ռուսաստանի կողմից Հայաստանի ատոմային և երկաթգծային ակտիվների ձեռքբերման շուրջ արդեն տեղի ունեցած և ընթացիկ իրադարձությունների, հայ-թուրքական ցամաքային սահմանի շուտափույթ բացման նախաձեռնությունների և Թուրքիայի տարածքում առաջին ատոմային էլեկտրակայանի կառուցման տենդերը Ռուսաստանին հանձնելու մի ամբողջ համալիր կարող է արտահայտվել հետևյալում. ուրանի պաշարները Հայաստանում միտված են Թուրքիայի հեռանկարային պահանջարկի բավարարմանն այդ ռեսուրսով:

<sup>1</sup> С.В. Кириенко - год на посту руководителя Росатома: комментарии и аналитика. Завершился первый год эры «атомного ренессанса» в России, <http://www.rosatom.ru/view/kirienko/page3/>, 2006.

Եթե այս ենթադրությունը 2009-2010թթ. հեռանկարում «նյութականորեն» (արդյունահանման և արտահանման համար անհրաժեշտ ուրանի ծավալներ Հայաստանի տարածքում) և քաղաքական-տնտեսական առումով (Հայաստանի և Թուրքիայի միջև ցամաքային կապի վերականգնում և թուրքական իշխանությունների կողմից վերջնական որոշման ընդունում՝ հոգուտ Ռուսաստանի կողմից թուրքական ատոմակայանի կառուցման)<sup>1</sup> հաստատվի, ապա հարավկովկասյան տարածաշրջանում և նրա շուրջ կարող է ձևավորվել որակապես այլ իրավիճակ, որը լրացուցիչ պայմաններ կստեղծի տարածաշրջանային ռազմաքաղաքական և էներգետիկ անվտանգության համար:

Միևնույն ժամանակ, Հարավային Կովկասում և հարակից շրջաններում առաջատար տերությունների շահերի հետ կապված իրավիճակն այնքան «նուրբ» է, որ անհրաժեշտ է դրսևորել խիստ հավասարակշռված և պրագմատիկ մոտեցում հիմնական արտաքին խաղացողների իրական մտադրությունները գնահատելիս: Այսպես, փորձագետների շրջանում տարածվում է այն կարծիքը, որ թուրքական ազգային միջուկային էներգետիկայի զարգացման նախագիծը ենթադրում է ԱՄՆ աջակցություն Թուրքիայի տարածքում ուրանի հարստացման կենտրոնի ստեղծման գործում, ինչը, ի թիվս այլոց, հնարավորություն կընձեռի Իրանին միջուկային վառելիք գնել Թուրքիայից: Ըստ այդմ՝ ենթադրվում է, որ այսպիսով ԱՄՆ-ը ցանկանում է հետագայում օգտագործել Թուրքիան որպես էներգետիկ միջուկային կենտրոն ԱԷՄԳ շրջանակներում Անգարսկում (Իրկուտսկի մարզ) ուրանի հարստացման կենտրոնի ստեղծմանն ուղղված Ռուսաստանի նախաձեռնություններին դիմակայելու համար: ԱՄՆ-ը, վերահսկելով թուրքական միջուկային լծակը, փորձում է օգտագործել այն ոչ միայն որպես Իրանի վրա ճնշում գործադրելու միջոց, որն ինքն է ձգտում հարս-

<sup>1</sup> Ինչպես հայտարարել էր թուրքական կողմը 2008թ. դեկտեմբերին, ռուսական տեխնոլոգիաները պիտի վերցվեն որպես հիմք Թուրքիայում կառուցվելիք առաջին ատոմակայանի համար, որն այդ երկրի իշխանությունները նախատեսում են կառուցել միջերկրածովյան Մերսին նահանգում. Թուրքիայի Ատոմային էներգիայի գործակալությունը դրական է գնահատել առաջին ազգային ատոմակայանի շինարարության նախագծի տեխնիկական հիմնավորումը, որին մասնակցում է ռուս-թուրքական կոնսորցիումը, որի կազմում են «Ատոմշինէքսպորտ», «Բնտեր ՌՍՕ ԵԷՍ» և թուրքական «Պարկ Թեքնիկ» ընկերությունները: Տեղերի սակարկությունները տեղի են ունեցել 2008թ. սեպտեմբերի վերջին, և ռուս-թուրքական կոնսորցիումը միակ մասնակիցն էր, որը ժամանակին ներկայացրել էր անհրաժեշտ փաստաթղթերը: Հեռանկարում երկրորդ ատոմակայանը կարող է կառուցվել սևծովյան Միոսպ գավառում (*Առաջին ատոմակայանը Թուրքիայում կկառուցվի ռուսական տեխնոլոգիաների հիման վրա*, <http://www.prime-tass.ru/news/show.asp?id=849270&ct=news.>, 19.12.2008).

տացնել ուրանը, այլև Մերձավոր և Միջին Արևելքում իր քաղաքական, տնտեսական և ռազմական ծրագրերի իրագործման համար<sup>1</sup>:

Հիմնական արտաքին դերակատարների էներգետիկ շահերի բազմազանությունը կարող է միատեղվել նրանց գլխավոր շահի ընդհանուր կետում, այն է՝ Հարավային Կովկասի կայունության և անվտանգության ամրապնդումը: Անցած տարվա օգոստոսին տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձություններից հետո առաջիկայում ինչպես տարածաշրջանային, այնպես էլ Հարավային Կովկասի համար արտաշրջանային ուժերի ջանքերը պիտի ուղղված լինեն տարածաշրջանն ապակայունացնող գործոնների չեզոքացմանը, ինչում իր դերը կարող է խաղալ ատոմային հզորությունների զարգացումը և, մասնավորապես, միջուկային վառելիքի պոտենցիալ արտադրողների և գնորդների միջև փոխշահավետ համագործակցության հաստատումը:

<sup>1</sup> *А.А.Гурьев, Россия укрепляет позиции в атомной энергетике Турции*, <http://www.iimes.ru>, 30.12.2008.

**ՄԻՆՉԵՎ 2030Թ. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ  
(նախագիծ)<sup>1</sup>**

***Կարեն Վերանյան***

2007թ. հրապարակվեց Ռուսաստանի Դաշնության Արդյունաբերության և Էներգետիկայի նախարարության ենթակայության տակ գործող Էներգետիկ ռազմավարության ինստիտուտի պատրաստած «մինչև 2030թ. Ռուսաստանի Էներգետիկ ռազմավարության հայեցակարգը» նախագիծը, որի մշակման աշխատանքներին մասնակցել են նաև երկրի գիտահետազոտական այլ ինստիտուտների փորձագետներն ու վերլուծաբանները: Փաստաթղթում վերլուծության է ենթարկվել 2003թ. օգոստոսին Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից հաստատված «2020թ. Ռուսաստանի Էներգետիկ ռազմավարության հայեցակարգի» իրականացման ընթացքը, ներկայացվել են վերջինիս ձեռքբերումներն ու բացթողումները: Նոր մինչև 2030թ. ռազմավարական հայեցակարգի նախագծում մասնավորապես լուսաբանվում են այնպիսի ակտուալ հիմնահարցեր, ինչպիսիք են Ռուսաստանի Դաշնության վառելիքաէներգետիկ բալանսի ապահովումը, Ռուսաստանի տնտեսության դինամիկ զարգացումը՝ համաշխարհային Էներգետիկ շուկայի անկայունության, միջազգային Էներգետիկ հարաբերություններում առկա քաղաքական ու տնտեսական խնդիրների համատեքստում: Ռուսաստանի վառելիքաէներգետիկ բալանսի ու Էներգետիկ ռեսուրսների արտահանման ուղղությունների դիվերսիֆիկացման անհրաժեշտությունը, երկրի Էներգետիկայի զարգացման նոր նախաձեռնությունները (անցումը ռեսուրսահումքային ռազմավարությունից ռեսուրսանորարարական զարգացման) և շատ այլ հարցեր նախադրյալ ստեղծեցին ոչ միայն վերանայելու 2020թ. հայեցակարգը, այլև ստեղծելու նոր՝ մինչև 2030թ. ևս մեկ հիմնարար փաստաթուղթ:

<sup>1</sup> *Министерство промышленности и энергетики РФ. Институт энергетической стратегии. «Концепция энергетической стратегии России на период до 2030г.» (проект), Москва, 2007г.*



Էներգետիկ ռազմավարության հայեցակարգի նոր փաստաթղթի պատրաստումը, մյուս կողմից, պայմանավորված էր նաև վերջին կես տասնամյակում միջազգային հարաբերություններում գոյացած նոր քաղաքական ու տնտեսական մարտահրավերներով: Մասնավորապես, խոսքը վերաբերում է ռուս-ուկրաինական գազային պատերազմին, վերջին շրջանում միջազգային էներգետիկ հարաբերություններում Ռուսաստան-ԱՄՆ տարաձայնությունների խորացմանն ու առհասարակ ռուս-ամերիկյան հարաբերությունների սառեցմանը: Նոր փաստաթղթի պատրաստումը, կարելի է ասել, ուղղված էր հաստատելու և ամրապնդելու Ռուսաստանի որպես էներգետիկ տերության, դիրքերը գլոբալ էներգետիկ անվտանգության համակարգում ու միջազգային էներգետիկ հարաբերություններում ընդհանրապես:

Ստորև կփորձենք կենտրոնանալ փաստաթղթում ներկայացված էներգետիկ ռազմավարության հիմնադրույթների ու գերակայությունների, ռազմավարական նշանակության նախագծերի լուսաբանման ու առհասարակ Ռուսաստանի էներգետիկայի ռազմավարական զարգացման 2030թ. կանխատեսումների վրա:

### ***Ռուսաստանի էներգետիկ ռազմավարության գերակայությունները***

2007-2030թթ. Ռուսաստանի էներգետիկ ռազմավարության (այսուհետ՝ ԷՌ-2030թ.) հայեցակարգի նախագծի համաձայն, Ռուսաստանի էներգետիկ քաղաքականությունն իր առջև խնդիր է դրել երկրի էներգետիկ սեկտորի զարգացման ու աջակցման միջոցով բավարարել Ռուսաստանի աճող տնտեսության էներգետիկ պահանջները՝ միջազգային պայմանագրերում Ռուսաստանի ստանձնած բոլոր պարտավորությունների կատարման շրջանակներում: ԷՌ-2030թ. հայեցակարգի էներգետիկ ռազմավարության կարևոր առանձնահատկություններից մեկն այն է, որ էներգետիկ ռազմավարության նոր համակարգի տեսլականում դրված է *ճկուն կանխատեսումների* մեթոդաբանությունը, որը եկել է փոխարինելու ավանդական կարծրացած նպատակներին ու ռազմավարությանն առհասարակ: Ասել է թե՛ փաստաթղթի շրջանակներում ձևակերպված էներգետիկ քաղաքականությունը պետք է ապահովի ինչպես այդ քաղաքականության ռազմավարական վերջնական, որոնք անփոփոխ են ԷՌ-2030թ. ողջ ժամանակահատվածում, այնպես էլ տարբեր փուլերի ընթացիկ նպատակները, որոնք ունեն բավարար ճկունություն և այս կամ այն հանգամանքներից ելնելով՝ կարող են փոփոխվել:

Էներգետիկ քաղաքականության գլխավոր նպատակը շարունակում է մնալ Ռուսաստանի համընդհանուր բնական ու արտադրական էներգետիկ պոտենցիալի արդյունավետ օգտագործումը՝ երկրի տնտեսության զարգացման և նրա բնակչության կենսապայմանների բարելավման նպատակներով: Դրված նպատակի իրականացումը ենթադրում է լուծում տալ էներգետիկ քաղաքականության հետևյալ ծրագրային հարցերին.

- էներգետիկ անվտանգության և էներգետիկ ռեսուրսների՝ տնտեսապես հիմնավորված ներքին պահանջարկի գերակա ապահովում,
- էներգետիկ պոտենցիալի զարգացում ու ընդլայնում, երկրի տնտեսության կայուն զարգացման աջակցում՝ ի հաշիվ վառելիքաէներգետիկ ռեսուրսների արտահանման,
- տնտեսության և էներգետիկայի նորարարական զարգացման ապահովում:

ԷՌ-2030թ. հայեցակարգի նախագծում առանձնացվում են Ռուսաստանի էներգետիկ հեռանկարային քաղաքականության հիմնական գերակայությունները, որոնք են.

- Ռուսաստանի էներգետիկ պահանջների արդյունավետ ապահովում, երկրի ու նրա շրջանների էներգետիկ անվտանգության երաշխավորված պայմանների ստեղծում,
- Ռուսաստանի էներգետիկ պոտենցիալի արդյունավետ օգտագործում երկրի միջազգային տնտեսական ու քաղաքական փոխհարաբերություններում, ինչպես նաև գլոբալ էներգետիկ անվտանգության համակարգի ձևավորմանը մասնակցության գործում,
- երկրի տնտեսությունում և բնակչության կյանքում էներգետիկ ծախսերի առավելագույն նվազեցում՝ էներգետիկ արտադրության արդյունավետության բարձրացման, վառելիքաէներգետիկ բալանսի համակարգի օպտիմալացման, վառելիքաէներգետիկ ռեսուրսների օգտագործման ընթացքում տեսակարար էներգատարողության լայնակի նվազեցման միջոցով,
- շրջակա միջավայրի վրա էներգետիկ ռեսուրսների արդյունահանման, արտադրության և օգտագործման տեխնադին ազդեցությունների նվազեցում,
- տնտեսության և էներգետիկայի նորարարական զարգացման ապահովում՝ ներառյալ էներգիայի այլընտրանքային աղբյուրների ու էներգախնայող տեխնոլոգիաների զարգացումը:

Ռուսաստանի էներգետիկ քաղաքականության հիմնական նպատակների ու գերակայությունների իրագործման համար առաջարկվում է ԷՌ-2030թ. հայեցակարգի մշակման **սցենարային-իրավիճակային մոդելը**, որը ռազմավարական ծրագրման հարցում ենթադրում է համալիր մոտեցում՝ հաշվի առնելով ինչպես երկրի մակրոտնտեսական ու աշխարհաքաղաքական շահերը, այնպես էլ էներգետիկ պահանջների բավարարման իրատեսական հնարավորությունները: Սցենարային-իրավիճակային մոդելի մեթոդաբանության առանձնահատկությունն այն է, որ սկզբնական փուլում ներկայացվում են երկրի տնտեսության զարգացման որոշակի սցենարներ, որից հետո ձևավորվում է նպատակների համընդհանուր տեսլականը՝ առաջադրված սցենարների իրագործման համար: Նման մեթոդաբանության կիրառումը թույլ է տալիս կանխատեսումներում լինել առավել ճկուն, մեծացնում է երկրի զարգացման արտաքին ու ներքին սոցիալ-տնտեսական փոփոխվող պայմաններին էներգետիկ ռազմավարության ադապտացման հնարավորությունները, ինչի արդյունքում երկրի վառելիքաէներգետիկ համալիրի (ՎԷՀ) պոտենցիալի գնահատումներում նվազում է էներգետիկ ռազմավարության կախվածությունը արտաքին այս կամ այն չափորոշիչների փոփոխությունից:

### **Էներգետիկ քաղաքականության ռազմավարական ուղեցույցները**

ԷՌ-2030թ. պետական էներգետիկ քաղաքականության նպատակների ու գերակայությունների իրագործման գործընթացը հիմնվում է էներգետիկ ռազմավարության հիմնական ուղեցույցների վրա, որոնք են.

- Ռուսաստանի և նրա շրջանների էներգետիկ երաշխավորված անվտանգության ապահովումը՝ որպես երկրի ազգային անվտանգության բաղադրիչ. այն ենթադրում է արդյունահանվող էներգետիկ ռեսուրսների երկրաբանական պաշարների տարեկան աճման տեմպերի գերազանցում արդյունահանման տարեկան ծավալների նկատմամբ (իսկ նվազագույն դեպքում՝ նրանց համարժեք հարաբերակցման ապահովում): Երկրի էներգետիկ անվտանգության ապահովման հարցում կարևորվում է էներգետիկ պահանջարկի (ներքին) ու առաջարկի հավասարակշռության պահպանումը: Առանձնակի նշանակություն է տրվում նաև երկրի ու նրա շրջանների վառելիքային բալանսում էներգակիրների դիվերսիֆիկացման անհրաժեշտությանը:
- Երկրի տնտեսության էներգետիկ արդյունավետության բարձրացումը. Ռուսաստանի տնտեսության զարգացման ընթացիկ ու կանխատեսվող տեմպերի համատեքստում էներգետիկ ռեսուրսների ներքին

պահանջարկի հետագա աճն անհնար է լինելու բավարարել առանց երկրի տնտեսության տեսակարար էներգատարողության ընդհանուր նվազեցման՝ ի հաշիվ վերջինիս էներգետիկ արդյունավետության բարձրացման: Երկրի տնտեսության էներգետիկ արդյունավետության բարձրացման գլխավոր միջոցներից են վերջինիս կառուցվածքային փոխակերպումը և ցածր էներգատարողությամբ սեկտորների գերակա զարգացումը, ներկայում առկա էներգախնայող տեխնոլոգիական պոտենցիալի (կազմում է ողջ էներգասպառման 45%-ը) օգտագործումը: Երկրի տնտեսական գործունեության բոլոր ոլորտներում էներգախնայողությանն ուղղված անհրաժեշտ ներդրումներ ապահովելու նպատակով կարող են հիմնվել էներգախնայողությունների դաշնային և շրջանային հիմնադրամներ:

- *Էներգետիկ սեկտորի ֆինանսատնտեսական կայունության և բյուջետային արդյունավետության ապահովումը.* ֆինանսապես կայուն և արդյունավետ վառելիքաէներգետիկ համալիրի ձևավորման գործընթացում պետք է հաշվի առնվեն երկրի էներգետիկ սեկտորի ինչպես ընդհանուր ռազմավարական մոտեցումները, այնպես էլ նրա կառուցվածքի ճյուղային առանձնահատկությունները: Ռուսաստանի ՎԷՀ ածխաջրածնային սեկտորներում (նավթի ու գազի արդյունահանում) բարձր հարկաբյուջետային եկամուտների մուտքագրումը չպետք է խոչընդոտի այդ ոլորտի զարգացմանն ուղղված ներդրումների գործընթացի իրականացմանը:
- *Էներգետիկ սեկտորի նորարարական զարգացումը.* գիտատեխնիկական առաջընթացը շարունակում է առանցքային դեր ունենալ ՎԷՀ ավանդական սեկտորներում էներգետիկ արդյունավետության բարձրացման, էներգիայի նոր աղբյուրների շահագործման (գազահիդրատներ, վերականգնվող էներգետիկ աղբյուրներ) և դրանց օգտագործման նոր տեխնոլոգիաների հարցում: Կանխատեսումների համաձայն, 2030թ. էներգիայի նորարարական աղբյուրները կկազմեն Ռուսաստանի ներքին ու արտահանվող էներգետիկ պահանջարկի շուրջ 4-5%-ը:
- *Ռուսաստանի ՎԷՀ բնապահպանական անվտանգության ապահովումը.* Ռուսաստանի էներգետիկ սեկտորի բնապահպանական անվտանգության ապահովումը ենթադրում է շրջակա միջավայրի վրա էներգետիկ ռեսուրսների արդյունահանման, արտադրության ու սպառման բացասական ազդեցությունների նվազեցմանն ուղղված քաղաքականության արդյունավետ իրագործում:

### **Էներգետիկ քաղաքականության հիմնական բաղադրիչները**

ԷՌ-2030թ. էներգետիկ քաղաքականության հիմնական բաղադրիչների շարքում նախևառաջ հարկ է առանձնացնել երկրի ներքին էներգետիկ շուկաների զարգացման խնդիրը՝ ուղղված էներգետիկ սեկտորում իրական ու գործունակ մրցակցային միջավայրի ստեղծմանն ու ՎԷՀ հավասարակշռված զարգացմանը: Երկրորդ կարևոր բաղադրիչը վերաբերում է Ռուսաստանի շրջաններում իրականացվող էներգետիկ քաղաքականության հարցերին: Երկրի շրջանային էներգետիկ քաղաքականությունը պետք է հիմնվի այդ շրջանների էներգետիկայի՝ տնտեսապես արդյունավետ հավասարակշռության ապահովման վրա՝ հաշվի առնելով ինչպես տեղական էներգետիկ պոտենցիալի զարգացումը, այնպես էլ միջշրջանային էներգետիկ համացանցի ձևավորման անհրաժեշտությունը: Մյուս կողմից, սակայն, էներգամատակարարման խնդրում հարկավոր է հաշվի առնել նաև այդ շրջանների աշխարհագրական և հարցին առնչվող այլ ճյուղային առանձնահատկություններ: ԷՌ-2030թ. վերլուծության համաձայն, Ռուսաստանի դաշնային շրջանների էներգետիկ ապահովումը ենթադրում է հետևյալ աշխատանքների իրականացումը.

- *Կենտրոնական ու Հարավային դաշնային շրջանում* կզարգացվեն տեղական ատոմային էներգետիկայի ռեսուրսները (հիդրոկուտակիչ էլեկտրակայանի/ՀԿԷԿ կառուցում, իսկ հարավում՝ ՀԷԿ-ի կառուցում), կզարգացվի նաև նավթավերամշակումը: Նախատեսվում է Յամալա-նենեցական ինքնավար շրջանի գազի և Կուզնեցկի ածխի սպառման աճ: Հետագայում հնարավոր է համարվում Սիբիրից դեպի այս շրջաններ էլեկտրաէներգետիկ հեռահար հաղորդակցության անցկացումը:
- *Հյուսիսարևմտյան դաշնային շրջան*, որտեղ արագ տեմպերով կզարգանան Թիմանա-պեչորյան ավազանի ու Հյուսիսային ծովի շելֆի (ցամաքային ծանծաղուտ) նավթարդյունաբերությունը, Շտոկմանի հանքի գազի արդյունահանման ու սպառման գործընթացը, ինչպես և վերամշակվող հանքավայրերում ու Մեյդինի նոր հանքում (Կոմի Հանրապետություն) ածխի արդյունահանման աշխատանքները: Նպատակահարմար է համարվում նաև ատոմային էներգետիկայի հետագա զարգացումը: Միջոցներ կձեռնարկվեն Կալինինգրադի շրջանի էներգետիկ կախվածության վերացման ուղղությամբ:
- *Մերձվոլգյան դաշնային շրջանում* տեղի հանքավայրերից ածխաջրածինների արդյունահանման, վերամշակման ու սպառման աշխա-

տանքների հետ մեկտեղ նախատեսվում է գազ մատակարարել նաև Յամալա-նենեցական ինքնավար շրջանից: Կարգանա նաև ատոմային էներգետիկան:

- *Ուրալի դաշնային շրջանի* էներգամատակարարումը հիմնականում կապահովվի ի հաշիվ Յամալա-նենեցական ու Խանտի-Մանսիյսկի ինքնավար շրջանների գազի ու նավթի հանքերի ածխաջրածինների:
- *Միբիրի ու հեռավորարևելյան դաշնային շրջանի* էներգամատակարարումը կհենվի տեղի գազի ու նավթի հանքերի շահագործման, Կուզնեցկի ու Կանսկ-Աչինսկի ավազանների ածխի արդյունահանման զարգացման, Յակուտիայի Էլզինյան հանքավայրի շահագործման, ինչպես նաև Պրիմորիեի երկրամասի գործող հանքավայրերից ածխի արդյունահանման վրա:

Էներգետիկ քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից է նաև երկրի ներկայացվածությունը միջազգային էներգետիկ հարաբերություններում ու գլոբալ էներգետիկ անվտանգության համակարգում: Հայեցակարգի նախագծի համաձայն, Ռուսաստանի արտաքին էներգետիկ քաղաքականությունն ուղղված է լինելու երկրի արտաքին տնտեսական գործունեությունից առավելագույն շահույթ ստանալուն, համաշխարհային էներգետիկ շուկաներում Ռուսաստանի դիրքերի ամրապնդմանը, արտերկրում ռուսաստանյան տնտեսվարող սուբյեկտների աջակցմանն ու գլոբալ էներգետիկ անվտանգության ձևավորման գործընթացում երկրի մասնակցության ապահովմանը: Այդ քայլերի իրագործման համար նախատեսվում է զարգացնել էներգետիկ ռեսուրսների արտահանման ու հաղորդակցային ուղիների դիվերսիֆիկացումը՝ հաշվի առնելով երկրի էներգետիկ ռեսուրսների արտահանումների պոտենցիալը և հեռանկարները: Էներգետիկ արտաքին քաղաքականությունում շեշտվում է եվրասիական էներգահաղորդակցային համացանցի ձևավորման, միջազգային էներգետիկ համագործակցության նոր ձևաչափերի զարգացման անհրաժեշտությունը:

ԷՌ-2030թ. հայեցակարգի նախագծի համաձայն, էներգետիկ խնդիրների գլոբալացումը, միջազգային էներգետիկ հարաբերություններում Ռուսաստանի ազդեցության մեծացումն ու այդ համատեքստում էներգետիկ հիմնահարցերի էլ ավելի քաղաքականացումը պայմաններ են ստեղծում գլոբալ էներգետիկ անվտանգության համակարգի ձևավորման հարցում Ռուսաստանի քաղաքական ու գործնական դերակատարման ակտիվացման համար՝ որպես երկրի արտաքին էներգետիկ հեռանկարային քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը:

### **Էներգետիկ ռեսուրսների հավասարակշռված պահանջարկի ու առաջարկի ձևավորում**

Ռուսաստանի ՎԷՀ հեռանկարային զարգացման կարևոր նախապայմաններից են երկրի վառելիքաէներգետիկ ռեսուրսների ներքին պահանջարկի աճն ու զարգացման դինամիկան, որի ձևավորման գործընթացը կախված է Ռուսաստանի սոցիալ-տնտեսական զարգացումից, ինչպես նաև հետևյալ մակրոտնտեսական գործոնների ազդեցությունից.

- երկրի տնտեսության զարգացման դինամիկան ու կառուցվածքը (արդյունաբերական արտադրություն և այլն),
- տնտեսության տեսակարար էներգատարողությունը,
- էներգակիրների ներքին շուկայի գները,
- համաշխարհային տնտեսության ու էներգետիկ շուկաների զարգացման դինամիկան, Ռուսաստանի էներգակիրների արտահանման պահանջարկը և նրանց մրցունակությունը,
- էներգակիրների ներմուծման արդյունավետությունը և ծավալների նպատակահարմարությունը,
- համաշխարհային տնտեսությանը, գլոբալ էներգետիկ համակարգին երկրի տնտեսության ինտեգրման աստիճանը,
- էներգետիկ ռեսուրսների արդյունահանման, արտադրության ու սպառման (պահանջարկի) ռեգիոնալ ասպեկտները:

Փաստաթղթի փորձագիտական վերլուծության համաձայն, երկրի էներգետիկ ռեսուրսների պահանջարկի բավարարման հնարավորություններն իրենց հերթին պայմանավորվում են հետևյալ գործոններով.

- հանքահումքային ռեսուրսների կայուն զարգացում՝ համապատասխան էներգետիկ ռեսուրսների պահանջարկին համարժեք ծավալներով,
- էներգետիկ սեկտորների հիմնական արտադրական ֆոնդերի զարգացում, որոնք կապահովեն էներգետիկ ռեսուրսների արդյունահանումը, արտադրությունը, վերամշակումն ու փոխադրումը,
- էներգետիկ սեկտորի զարգացման համար բարենպաստ ներդրումային պայմանների ստեղծում,
- շրջակա միջավայրի վրա էներգետիկ ազդեցության նվազեցմանն ուղղված տնտեսական խթանիչների ստեղծում,
- ՎԷՀ նորարարական զարգացում. դա վերաբերում է ինչպես էներգե-

տիկ ավանդական սեկտորներին, այնպես էլ էներգիայի նոր աղբյուրների ու նոր էներգակիրների ոլորտներին,

- էներգետիկ սեկտորի շուկայական ենթակառուցվածքների զարգացում:

### ***Ռուսաստանի էներգետիկայի զարգացման կանխատեսումները մինչև 2030թ.***

2007-2030թթ. ընկած ժամանակահատվածում Ռուսաստանի տնտեսության զարգացման կարևորագույն գործոններից մեկը շարունակելու է մնալ էներգետիկ ռեսուրսների արտահանումը, թեև վերջինիս ունեցած որոշիչ նշանակությունը, համաձայն կանխատեսումների, աստիճանաբար կնվազի: Ռուսաստանը կպահպանի իր դերը՝ որպես վառելիքաէներգետիկ ռեսուրսների համաշխարհային խոշորագույն մատակարար: Եվրոպայի էներգետիկ շուկայում դոմինանտ դիրքեր զբաղեցնելով՝ Ռուսաստանն աստիճանաբար կզարգացնի էներգետիկ մատակարարումների դիվերսիֆիկացման քաղաքականությունը՝ ի հաշիվ Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների, առաջին հերթին՝ Չինաստանի, Ճապոնիայի, Կորեայի Հանրապետության, Հնդկաստանի, ինչպես նաև Հյուսիսային Ամերիկայի: Ընդ որում, էներգակիրների արտահանման կառուցվածքում աստիճանաբար կավելանա առավել բարձր հավելյալ արժեք ունեցող էներգակիրների մասնաբաժինը (նավթամթերք, բարձր աստիճանի մաքրության գազ, հարստացված ածուխ և այլն):

ԷՌ-2030թ. կանխատեսումները ցույց են տալիս, որ երկարաժամկետ հեռանկարում միջազգային էներգետիկ շուկայում Ռուսաստանի դերակատարությունը կաճի, ինչը թույլ կտա վերջինիս էական ազդեցություն ունենալ հիմնական էներգակիրների համաշխարհային գների ձևավորման գործընթացի վրա: Դա հատկապես կարևորվում է այն առումով, որ նավթի գների փոփոխությունը հետագայում նույնպես կշարունակի հանդիսանալ այն կարևոր արտաքին գործոններից մեկը, որոնք ազդեցություն են գործում ինչպես երկրի ՎԷՀ ֆինանսական իրադրության, այնպես էլ վերջինիս տնտեսության աճի տեմպերի վրա առհասարակ: Ըստ փորձագիտական գնահատումների, երկարաժամկետ հեռանկարում նավթի գները վստահաբար կաճեն՝ չբացառելով, սակայն, կարճաժամկետ անկումները: Նավթի գների աճի հիմնական գործոնը հանդիսանալու է ցածր ինքնարժեքով թեթև, ցածր ծծմբայնության նավթի արդյունահանման աճի տեմպերի կրճատումը և առավել բարդ բնակլիմայական պայմաններում արդյունահանվող ծանր նավթի շուկայի տեսակարար կշռի ավելացումը: Էներգակիրներ-



րի պակասորդի սպառնալիքի առկայության պայմաններում նավթի շուկան կլինի առավել զգայուն բնական աղետների ու միջազգային հակամարտությունների հետևանքով առաջացած էներգետիկ մատակարարումների ցանկացած խաթարման նկատմամբ: Այս ամենը տեղի է ունենալու նավթի ու նավթամթերքի համաշխարհային պահանջարկի ավելացման ֆոնին, որի շարժիչ ուժերն են լինելու Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրները, ինչպես նաև Չինաստանն ու Հնդկաստանը:

Բնական գազի գները, որի պահանջարկն աշխարհում կաճի է՛լ ավելի արագ տեմպերով, քան թե նավթի պարագայում, երկարաժամկետ հեռանկարում կպայմանավորվեն նավթային միջինացված հաշվարկի գներով՝ չբացառելով, սակայն, որոշակի փոփոխությունների հնարավորությունը: Գազի համաշխարհային շուկայի զարգացման վրա էական ազդեցություն կունենա գազի հեղուկացման և վերագազավորման տեխնոլոգիաների զարգացումն ու լայն կիրառումը, ինչպես նաև համապատասխան հզորությունների ապահովումը դրա փոխադրումների ժամանակ: Այդտեղից էլ հետևում է, որ զգալի փոփոխություններ կկրեն բնական գազի փոխադրման ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային հաղորդակցային ուղիները:

ԷՌ-2030թ. կանխատեսումների համաձայն, երկարաժամկետ հեռանկարում կավելանա Ռուսաստանի էներգետիկ ենթակառուցվածքի նշանակությունը՝ որպես եվրասիական տնտեսական տարածաշրջանի կարևոր կապող օղակ: Ընդ որում, Ռուսաստանի դերը կբնորոշվի ոչ միայն երկրի էներգակիրների արդյունահանման ու մատակարարումների, այլև երրորդ երկրների էներգետիկ հոսքերի փոխադրումների նկատմամբ վերահսկողության արդյունավետ կառավարման հնարավորություններով:

Փորձագիտական գնահատականները հաստատում են, որ ռուսաստանյան վառելիքաէներգետիկ ռեսուրսների (ՎԷՌ) արտահանման ծավալներն աստիճանական աճ են արձանագրելու, եթե հաշվի առնենք Ռուսաստանի էներգետիկ ռեսուրսների արտաքին պահանջարկի աճի տեմպերն ու էներգետիկ ռեսուրսների մատակարարումների հարցում Ռուսաստանի ստանձնած պարտավորությունները (միննույն ժամանակ, սակայն, չպետք է անտեսել նաև էներգետիկ ռեսուրսների ներքին պահանջարկի աճը):

Աղյուսակ 1

Ռուսաստանի առաջնային ՎԷՌ վառելիքաէներգետիկ բալանսի կանխատեսումների հիմնական ցուցիչները, մինչև 2030թ. (բարենպաստ սցենար)

Անվանումը	2005	2010	2015	2020	2025	2030
<b>Առաջնային ՎԷ ռեսուրսները, ընդամենը, մլն տոննա պ.վ.<sup>1</sup></b>	1756	1936	2099	2251	2383	2470
<b>որից՝</b>						
<b>Արդյունահանում և արտադրություն, մլն տոննա պ.վ.</b>	1728	1859	2001	2180	2314	2418
այդ թվում՝						
Նավթ						
մլն տ	470	510	530	550	565	570
մլն տ պ.վ.	673	730	764	787	808	815
Գազ						
մլրդ խմ	638	670	705	750	780	800
մլն տ պ.վ.	734	770	811	862	897	920
Ածուխ						
մլն տ	298	330	360	430	490	540
մլն տ պ.վ.	204	224	234	279	318	351
Էլեկտրաէներգիայի արտադրություն						
ԱԷԿ						
մլրդ կվտ/ժ	150	160	210	290	400	500
մլն տ պ.վ.	52	53	67	90	120	145
ՀԷԿ						
մլրդ կվտ/ժ	175	185	200	215	235	260
մլն տ պ.վ.	58	59	65	65	71	77
Այլ ոչ վառելիքային ռեսուրսներ, մլն տ պ.վ.	7	23	60	97	100	110
<b>Ներմուծում, ընդամենը մլն տ պ.վ.</b>	28	77	98	71	69	52
այդ թվում՝						
Գազ՝						
մլրդ խմ	7,2	50	68	45	48	31
մլն տ պ.վ.	8,3	58	79	52	55	37
Ածուխ						
մլն տ	22	22	22	22	15	15
մլն տ պ.վ.	14,4	14,4	14,4	14,4	10	10
Հեղուկներ						
մլն տ	3,3	3	3	3	3	3
մլն տ պ.վ.	4,7	4,3	4,3	4,3	4,3	4,3
<b>Առաջնային ՎԷՌ ծախսը, ընդամենը մլն տ պ.վ.</b>	1756	1936	2099	2251	2383	2470
որոնցից՝						
<b>Ներքին սպառում, մլն տ պ.վ.</b>	963	1100	1225	1330	1410	1493
այդ թվում՝						
Հեղուկներ						
մլն տ	127	148	155	160	165	170
մլն տ պ.վ.	183	215	224	229	235	243

<sup>1</sup> պ.վ. – պայմանական վառելիք

<sup>2</sup> 2010-2030թթ. համար, որտեղ հաշվի է առնված Գենտրոնական ու Միջին Ասիայի երկրների գազի փոխադրումը:

Անվանումը	2005	2010	2015	2020	2025	2030
Գազ						
մլրդ խմ	437	500	538	545	553	556
մլն տ պ.վ.	506	575	619	627	636	640
Ածուխ						
մլն տ	234	267	297	367	420	470
մլն տ պ.վ.	161	179	199	246	269	303
ԱԷԿ և ՀԷԿ էլեկտրաէներգիա						
մլրդ կվտ/ժ	314	328	385	455	560	660
մլն տ պ.վ.	107	109	123	140	169	197
Այլ ոչ վառելիքային ռեսուրսներ, մլն տ պ.վ.	7	23	60	87	100	110
<b>Արտահանում, մլն տ պ.վ.</b>	<b>794</b>	<b>836</b>	<b>874</b>	<b>921</b>	<b>973</b>	<b>977</b>
այդ թվում՝						
Հեղուկներ						
մլն տ	346	365	378	393	403	403
մլն տ պ.վ.	496	522	540	562	576	576
Գազ						
մլրդ խմ	207	220	235	250	275	275
մլն տ պ.վ.	238	253	270	287	316	316
Ածուխ						
մլն տ	83,9	85	85	85	85	85
մլն տ պ.վ.	56	56	56	56	58	58
Էլեկտրաէներգիա						
մլրդ կվտ/ժամ	11,3	17	25	50	75	100
մլն տ պ.վ.	3,7	4,5	8	16	23	29

**Ծանոթ.** տվյալները բերված են կլորացված թվերով, և հաշվի չի առնվել դրանցում վառելիքի պաշարների փոփոխությունների դինամիկան:

### **Ռազմավարական նշանակության էներգետիկ նախաձեռնությունները**

ԷՌ-2030թ. հայեցակարգի ռազմավարական էներգետիկ նախաձեռնությունների շարքում պետք է առանձնանցել հետևյալ նախագծերը.

- **Յամալ թերակղզու գազի հանքավայրերի շահագործում.** Յամալա-նենեցական ինքնավար շրջանի հիմնական հանքավայրերում գազի արդյունահանման անհրաժեշտ աճի ապահովման գլխավոր աղբյուր են հանդիսանալու Յամալ թերակղզու հանքավայրերը (Յամալա-նենեցական ինքնավար շրջանի գործող հանքավայրերում գազի արդյունահանման նվազեցումը 2030թ. դրությամբ գնահատվում է տարեկան 400 մլրդ խմ): Առանց Յամալ թերակղզու գազի հանքերի շահագործման, Ռուսաստանը չի կարող ապահովել գազի համապատասխան պահանջարկը: Յամալ թերակղզու հանքավայրերից գազի արդյունահանումը նախատեսվում է սկսել 2010-2011թթ.:

- *Շտովանի գազի ծովային հանքավայրի շահագործումը*, որը 2020թ. կապահովի գազի արդյունահանման 100 մլրդ խմ աճ (երկրի գազի ողջ արդյունահանման ծավալների շուրջ 15%-ը):
- *Հյուսիսարևմտյան դաշնային շրջանի ածխաջրածինների պաշարների շահագործում*. գործող հանքավայրերում նավթի արդյունահանման անկման պայմաններում Ռուսաստանի հյուսիս-արևմուտքում (Արխան-գելսկի շրջան, Նենեցական ինքնավար շրջան) նավթի երկրաբանական պաշարների շահագործումը կարող է ապահովել նավթի արդյունահանման աճը 60-70 մլն տոննայով (ողջ երկրում կանխատեսվող նավթարդյունահանման ամբողջ ծավալի 11-13%-ը):
- *Արևելյան Սիբիրի և Հեռավոր Արևելքի ածխաջրածինների պաշարների շահագործում*. այս շրջաններում նախատեսվում է ստեղծել ածխաջրածինների արդյունահանման նոր կենտրոններ, որոնք անհրաժեշտ են ինչպես Ռուսաստանի Արևելքի էներգետիկ պահանջների բավարարման, այնպես էլ դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրներ ածխաջրածինների արտահանման համար: Մասնավորաբար, Արևելյան Սիբիրում ու Յակուտիայում նախատեսվում է արդյունահանել տարեկան շուրջ 65-70 մլ տոննա նավթ, իսկ Սախալին կղզու շելֆում՝ ևս 25 մլն տոննա, որոնք ընդհանուր կազմում են երկրի կանխատեսվող նավթարդյունահանման ամբողջ ծավալի 17%-ը: Այս շրջաններում 2030թ. գազի արդյունահանման ծավալները կարող են ավելանալ գրեթե 100 մլրդ խմ (երկրի գազի արդյունահանման ողջ ծավալների 10-13%-ը):
- *Ատոմային էներգետիկայի զարգացում*. 2030թ. ԱԷԿ հզորությունը կարող է հասնել 60-75 մլն կվտ/ժ, իսկ դրանցում էլեկտրաէներգիայի արտադրությունը՝ 400-500 մլրդ կվտ/ժ, ինչը կազմում է Ռուսաստանի էլեկտրաէներգիայի ողջ արտադրական ծավալների 25-30%-ը:
- *Հիդրոէներգետիկայի զարգացում*. Ռուսաստանի գետերի ջրային ռեսուրսների տնտեսապես արդյունավետ պոտենցիալը կազմում է տարեկան 852 մլրդ կվտ/ժ, որից ներկայում տարեկան օգտագործվում է միայն 205 մլրդ կվտ/ժ (24%): 2030թ. ՀԷԿ-ում էլեկտրաէներգիայի արտադրությունը (հիմնականում Սիբիրում ու երկրի եվրոպական հատվածի ՀԿԷԿ-ում) կարող է ավելանալ 40-42%-ով (185-ից մինչև 260 մլրդ կվտ/ժ), որը կապահովի արտադրության աճի ողջ ծավալի 10%-ը:
- *Էներգակիրների և էներգիայի ոչ ավանդական վերականգնվող և այլ նոր աղբյուրների շահագործման զարգացում*. փորձագիտական կանխատեսումների համաձայն, 2020թ. հետո երկրի էներգետիկ ռեսուրսների պահանջարկի բավարարման համար անհրաժեշտ է օգտագործել էներգիայի այլընտրանքային ու նորարարական աղբյուրները

(երկրաջերմային, արևային, քամու, բիոէներգիայի, ջրածնային, ջերմամիջուկային էներգետիկա), որոնք կկազմեն երկրի էներգասպառման ողջ ծավալի 7%-ը:

- *Էներգահաղորդակցությունների ենթակառուցվածքի զարգացում ու ռիվերսիֆիկացում.* գազի ու նավթի նոր հանքավայրերի շահագործումը և էներգակիրների արտահանման ծավալների ավելացումը պահանջում են նոր էներգետիկ հաղորդակցային ուղիների ստեղծում: Առանց այդ նախագծերի իրականացման, Ռուսաստանի տնտեսությունը չի կարող հենվել ՎԷՀ պոտենցիալի զարգացման վրա և ընդլայնել երկրի գեոէներգետիկ ու գեոքաղաքական ազդեցությունը: Էներգետիկ սեկտորում ռազմավարական նշանակության կարևոր ենթակառուցվածքային նախագծերից, որոնց իրականացման գործընթացն արդեն սկսվել կամ սկսվելու է մոտ ապագայում, առանձնացվում են.
- Արևելյան Սիբիր-Խաղաղ օվկիանոս (ԱՄԽՕ) նավթամուղի շինարարությունը,
- Բուրգաս-Ալեքսանդրոպոլիս նավթամուղի շինարարությունը,
- Խարյագա-Ինդիգա նավթամուղի շինարարությունը,
- «Հյուսիս» նավթամթերքի փոխադրման համակարգի շինարարությունը,
- «Հյուսիսային հոսք» գազամուղի շինարարությունը,
- «Ալթայ» գազամուղի շինարարությունը:

### ***Հիմնական եզրահանգումներ***

Ռուսաստանի վառելիքաէներգետիկ համալիրը շարունակում է մնալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական շարժիչ գործոնը: Ունենալով հարուստ բնական ռեսուրսներ՝ Ռուսաստանի ՎԷՀ-ը ապահովում է երկրի՝ էներգետիկ արտադրանքի ու ծառայությունների ոլորտում անհրաժեշտ ներքին ու արտաքին պահանջարկը՝ էական ներդրում ունենալով պետության ֆինանսատնտեսական համակարգի զարգացման գործում: Նշենք, որ 2005թ. Ռուսաստանի էներգետիկ սեկտորն ապահովում էր երկրի ՀՆԱ գրեթե 31%-ը, արտահանումից ստացված արժույթային մուտքերի 63,8%-ը:

ԷՌ-2030թ. հայեցակարգի նախագծում իրականացված վերլուծությունն ու կանխատեսումները ցույց են տալիս, որ մինչև 2030թ. Ռուսաստանի էներգետիկ սեկտորի գլխավոր խնդիրը հանդիսանալու է էներգետիկ հիմնական ռեսուրսների արտադրության ու սպառման միջև կայուն հավասարակշռության պահպանումը: Վերջինս զգալիորեն պայմանա-

վորված է էներգետիկ սեկտորում իրականացվող ու նախատեսվող ներդրումային համապատասխան քաղաքականությամբ:

Մյուս կողմից՝ Ռուսաստանի էներգետիկ սեկտորի հավասարակշռված զարգացումը պահանջում է ՀՆԱ տեսակարար էներգատարողության նվազեցում՝ երկրի տնտեսական աճի տեմպերի արագացման համատեքստում: Այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ է համարվում իրականացնել արդյունավետ էներգետիկ տեխնոլոգիաների ներդրման ակտիվ քաղաքականություն: 2007-2030թթ. Ռուսաստանի էներգետիկ սեկտորում կշարունակեն առանցքային դեր ունենալ ածխաջրածնային ռեսուրսները: Նավթագազային սեկտորի հիմնական խնդիրը լինելու է ավանդական հանքավայրերում նվազող արդյունահանումը և նոր՝ դժվար արդյունահանվող ռեսուրսների շահագործման անհրաժեշտությունը:

2030թ. Ռուսաստանի գազի սեկտորի զարգացման վրա էական ազդեցություն կունենան նաև բնական գազի հեղուկացման տեխնոլոգիաների զարգացումն ու կիրառման ընդլայնումը, ինչը կհանգեցնի համաշխարհային գազահաղորդակցական հոսքերի ու ռուսական գազի արտահանման դիվերսիֆիկացման փոփոխմանը՝ ի հաշիվ սպառման նոր շուկաների յուրացման: Կանխատեսումների համաձայն, միննույն ժամանակ նախատեսվում է եվրասիական տարածաշրջանի՝ Ռուսաստանի համար ավանդական դարձած շուկաներում մրցակցության ուժեղացում:

Ինչ վերաբերում է ածխի արդյունաբերության զարգացմանը, ապա կանխատեսվում է վերջինիս աճ՝ ներկայիս տեմպերը գերազանցող ցուցանիշներով՝ ի հաշիվ Ռուսաստանի վառելիքաէներգետիկ բալանսում ածխի արտադրության մասնաբաժնի ավելացման: Ածխի արդյունաբերության գլխավոր խնդիրը շարունակելու է մնալ Ռուսաստանի եվրոպական հատվածում և Ուրալում հաղորդակցությունների անհրաժեշտ հնարավորությունների բացակայությունը (վերջինս կարող է մասամբ փոխհատուցվել երկաթուղային սեկտորում համապատասխան պետական քաղաքականության իրագործման պարագայում):

2030թ. հեռանկարում Ռուսաստանի էլեկտրաէներգետիկ սեկտորում կանխատեսվում է միջուկային արդյունաբերության մասնաբաժնի ավելացում՝ հիդրոգեներացիայի կայուն չափաբաժնի պահպանման ու ջերմային էներգիայի մասնաբաժնի նվազեցման պայմաններում:

## ԹՈՒՐԳԻԱ. ԷՆԵՐԳԵՏԻԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑ ԴԱՌՆԱԼՈՒ ՀԵՌԱՆԿԱՐԸ

### *Մարզիս Հարությունյան*

2008թ. Թուրքիայի արտաքին գործերի նախարարության պատրաստած հատուկ զեկույցի՝ «Թուրքիայի էներգետիկ ռազմավարության»<sup>1</sup> համաձայն, այդ երկիրը գտնվում է աշխարհի նավթի ապացուցված պաշարների 72.7%-ի և բնական գազի ապացուցված պաշարների 71.8%-ի գրեթե անմիջական հարևանությամբ: Հաշվի առնելով Անկարայի աշխարհագրական հայտնի առավելությունները՝ պարզ է դառնում, թե որոնք կարող են լինել այդ երկրի ռազմավարական նպատակները:

Թեև նախորդ տարիների ընթացքում քիչ աշխատանք չի տարվել Թուրքիայի՝ միջազգային էներգետիկ հանգույց դառնալու համար, և 2006-2007թթ. շարք մտած «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթամուղն ու «Բաքու-Թբիլիսի-Էրզրում», «Թուրքիա-Հունաստան» (*Turkey-Greece Interconnector*) գազամուղներն առաջին հերթին կոչված են սպասարկելու միջազգային նախագծերը, սակայն լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ հարցի առնչությամբ հիմնական զարգացումները դեռ առջևում են:

Արդեն այսօր գոյություն ունեն մի քանի գործոններ, որոնք խոսում են միջազգային էներգետիկ համակարգում Թուրքիայի՝ որպես միջնորդ պետության դերի առաջիկա շոշափելի բարձրացման մասին:

Հատկապես վրաց-ռուսական պատերազմից և ռուս-ուկրաինական վերջին գազային հակամարտությունից հետո Եվրոպական երկրները սկսեցին շատ ավելի լուրջ վերաբերվել Թուրքիայի տարածքով մերձավորարևելյան, կասպյան և կենտրոնաասիական էներգակիրները ստանալու գաղափարին: Օրինակ, բնական գազի հարցում Ռուսաստանից բացի, Եվրոպայում համարում են, որ, խոշոր հաշվով, ունեն երեք այլընտրանք՝ Նորվեգիա, Ալժիր և Թուրքիա<sup>2</sup>, սակայն արդեն այսօր պարզ է, որ առաջին երկուսն ուղղակի չեն կարող

<sup>1</sup> Republic of Turkey, Ministry of Foreign Affairs, “Turkey’s Energy Strategy”, 2008.

<sup>2</sup> Առկա է նաև Լիբիայի տարբերակը, սակայն արևմտյան ընկերությունների առջև այդ երկրի նոր «բացվելու» պատճառով լիբիական ուղղությունն ավելի շատ համարվում է հեռանկարային: Ինչ վերաբերում է հեղուկ գազի (*Liquefied Natural Gas - LNG*) տարբերակին, որը հնարավորություն կտա առանց գազամուղների բնական գազ ներմուծել աշխարհի ցանկացած մասից, ապա ոլորտի խիստ ծախսատար լինելը (ներկայում հեղուկ գազ ընդունելու տերմինալներ են կառուցվում միայն Արևմտյան Եվրոպայում), այդ տարբերակը առայժմ անհնար է դարձնում Եվրամիության արևելյան մասի համար, որն էլ ամենից շատն է կախված ռուսական գազից:

ապահովել կապույտ վառելիքի այն ծավալները, որոնք կարող են էապես կրճատել կախվածությունը «Газпром»-ից<sup>1</sup>: Մինչդեռ, թուրքական ուղղությամբ ելք է բացվում մի հատված, ուր կենտրոնացած է բնական գազի աշխարհի ապացուցված պաշարների գրեթե կեսը<sup>2</sup>: Անշուշտ, նախկինում նույնպես Եվրոպայի համար թուրքական ուղղությունն արդիական էր, սակայն նորությունն այն է, որ այսօր հարցի առնչությամբ ընթանում է ժամկետների վերանայման՝ արագացման, մի գործընթաց, որի ցուցիչները մենք դեռ կտեսնենք<sup>3</sup>:

Երկրորդ կարևոր գործոնն ամերիկա-իրանական ու եվրոպա-իրանական ընթացող բանակցություններն են, ինչպես նաև 2011թ. նախատեսված ԱՄՆ իրաքյան կամպանիայի ավարտը: Նշված երկու գործընթացների հաջող ավարտի պարագայում արևմտյան սպառողների համար կարող են լիարժեքորեն բացվել էներգակիրներով հարուստ երկու երկրներ՝ Իրանն ու Իրաքը, որոնք միասին տիրապետում են նավթի աշխարհի ապացուցված պաշարների 20.5% և բնական գազի՝ 17.5%-ին<sup>4</sup>: Սակայն ինչն է կարևոր՝ Եվրոպայի և Միացյալ Նահանգների համար Թուրքիան, փաստորեն, միակ հարմար տարբերակն է, որի միջոցով կարելի է նշված նավթն ու գազը հասցնել Եվրամիություն՝ կրճատելով վերջինիս էներգետիկ կախվածությունը Ռուսաստանից: Օրինակ, ներկայում ընթացող ամերիկա-իրանական պայմանավորվածության պատճառներից մեկն էլ պետք է դիտարկել հենց էներգետիկ ոլորտում ռազմավարական փոխհամաձայնության հասնելու նպատակը: Էներգետիկ ոլորտը, թերևս, այն միակ բնագավառն է, որն այսօր Իրանի, ԱՄՆ-ի ու Եվրոպայի միջև կարող է լուրջ պայմանավորվածության հնարավորություն ստեղծել:

<sup>1</sup> Ներկայում «Газпром»-ը ապահովում է Եվրամիության բնական գազի ներմուծման մոտ 40%-ը՝ 140 մլրդ մ<sup>3</sup>:

<sup>2</sup> «BP Statistical Review of World Energy, June 2008»-ի համաձայն՝ Պարսից ծոցի ութ երկրները (Իրան, Իրաք, Գուվեյթ, Սաուդյան Արաբիա, Բահրեյն, Կատար, Արաբական Միացյալ Էմիրություններ, Օման) և Կասպիցին հարակից չորս պետությունները (Ադրբեջան, Ղազախստան, Թուրքմենստան, Ուզբեկստան) միասին տիրապետում են բնական գազի աշխարհի ապացուցված պաշարների 45.05%-ը:

<sup>3</sup> Հայտնի է հետևյալ ուշագրավ թիվը, եթե 2007թ. Եվրամիության բնական գազի տարեկան սպառումը կազմել է մոտ 500 մլրդ մ<sup>3</sup>, որից ներմուծվել է 300 մլրդ մ<sup>3</sup>, ապա արդեն 2020թ. ԵՄ բնական գազի տարեկան սպառումը կհասնի շուրջ 800 մլրդ մ<sup>3</sup>-ի: Եվ դա այն պայմաններում, երբ 1970թ. ի վեր միացյալ Եվրոպայի բնական գազի արդյունահանման ծավալները միայն ընկնում են: Եթե 29 տարի առաջ Եվրոպայում արդյունահանվում էր տեղում սպառվող բնական գազի մոտ 90%-ը, ապա 2007թ. մոտ 40%-ը (աղբյուրը՝ Pierre Noel, «Beyond Dependence: How to Deal With Russian Gas», November, 2008, European Council on Foreign Relations).

<sup>4</sup> Աղբյուրը՝ «BP Statistical Review of World Energy, June 2008».



Եվ վերջապես, երրորդ գործոնը Ղազախստանի ու հատկապես Թուրքմենստանի<sup>1</sup> նպատակն է դուրս գալ արևմտյան շուկաներ: Թեև մինչ օրս Ռուսաստանը բավական հաջող կերպով իր վերահսկողությունը պահպանել է կենտրոնաասիական երկրների էներգետիկ կարողությունների նկատմամբ, սակայն չպետք է բացառել այն տարբերակը, որ Իրանի «բացվելը» ԱՄՆ ու Եվրոպայի համար կարող է վերջիններիս մուտքի հնարավորություն ապահովել դեպի Կենտրոնական Ասիայի էներգետիկ պաշարներ: Մի հանգամանք, որն առայժմ Վաշինգտոնի և Բրյուսելի համար շարունակում է անհաղթահարելի մնալ Ադրբեջան-Կասպից և Պակիստան-Աֆղանստան-Կենտրոնական Ասիա ուղղություններով:

Միջազգային նշանակության էներգետիկ հանգույց դառնալը Թուրքիայի համար, սակայն, չի սահմանափակվում զուտ էներգետիկ կամ ֆինանսատնտեսական նպատակներով: Պատահական չէ, որ 2009թ. հունվարին, գտնվելով Բրյուսելում ու Եվրամիության պատասխանատուների հետ Միությանը Թուրքիայի հնարավոր անդամակցության հարցի շուրջ բանակցություններ վարելիս, վարչապետ Էրդոդանն իրար կապեց նաև Թուրքիայի տարածքում կառուցվելիք «Nabucco» գազամուղի արդյունավետության և ԵՄ-ին Անկարայի անդամակցության հարցերը:

Իհարկե, «Nabucco»-ի խնդիրը դժվար թե էական ներգործություն ունենա Եվրամիությանը Թուրքիայի անդամակցության հեռանկարի վրա: Քիչ հավանական է, որ նման հույսեր են կապում անգամ Անկարայում: Էրդոդանի նման քայլը ավելի շատ ի ցույց է դնում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ ձևավորվող մոտեցումները՝ էներգակիր ստացող երկրների, իսկ հետագայում նաև էներգակիրներ վաճառող երկրների հետ հարաբերվելիս՝ օգտագործել միջնորդ պետության ընձեռած հնարավորությունները:

Եթե փորձենք հակիրճ ձևակերպել ի հայտ եկող նորությունը, ապա Անկարայում նպատակ է դրված Թուրքիայի գեոստրատեգիական դիրքի և ռազմաքաղաքական կարողությունների մակարդակին հասցնել էներգետիկ

<sup>1</sup> Այստեղ պետք է նշել վերջին շրջանում Աշգաբադի կողմից ձեռնարկված քայլերը: Խոսքն առաջին հերթին վերաբերում է 2008թ. հոկտեմբերի 14-ին հրապարակված թուրքմենական բնական գազի հանքերի աուդիտի տվյալներին: Աուդիտը 2008թ. ընթացքում իրականացրել էր բրիտանական «Gaffney, Cline & Associates Ltd.» ընկերությունը: Համաձայն այդ տվյալների՝ Թուրքմենստանի բնական գազի ընդհանուր պաշարները գնահատվեցին ավելի քան 27.67 տրլն մ<sup>3</sup>, ինչը բնական գազի պաշարների առումով այդ երկիրն աշխարհում դարձնում է երկրորդը՝ Ռուսաստանից (44.60 տրլն մ<sup>3</sup>) հետո: Քաղաքական տեսանկյունից Աշգաբադի որոշումը՝ հրապարակել նման կարգի տեղեկություն, պետք է ընկալել որպես հայտ՝ նոր դերակատարությամբ հանդես գալու միջազգային էներգետիկ շուկայում:

հանգուցային երկրի ընձեռած հնարավորությունները, ինչը միայն կբարձրացնի այդ պետության կշիռը տարածաշրջանային և գլոբալ հարաբերություններում: Չնայած ներկայում Թուրքիան ներքին կարողությունների հաշվին բավարարում է իր էներգետիկ պահանջների ընդամենը 30%-ը, իսկ սպառվող հիմնական էներգակիրների առումով պատկերը հետևյալն է.

<b>Թուրքիայում սպառվող, տեղում արդյունահանվող և ներմուծվող նավթի ու բնական գազի ծավալները</b>											
<b>նավթ. հազ. բարել/ օրական</b>	<b>1997</b>	<b>1998</b>	<b>1999</b>	<b>2000</b>	<b>2001</b>	<b>2002</b>	<b>2003</b>	<b>2004</b>	<b>2005</b>	<b>2006</b>	<b>2007</b>
սպառում	630.58	629.07	626.53	666.88	618.62	657.73	644.97	661.37	659.33	677.62	690.55
արդյունահանում	67.23	66.13	58.38	51.42	46.83	47.09	45.82	42.93	45.46	43.95	45.53
ներմուծում	563.35	562.94	568.15	615.46	571.79	610.64	599.16	618.44	613.87	633.67	645.02
<i>նավթի Թուրքիայի սպացուցված պաշարները/ մլրդ բարել</i>	<i>0.260</i>	<i>0.331</i>	<i>0.317</i>	<i>0.299</i>	<i>0.296</i>	<i>0.296</i>	<i>0.300</i>	<i>0.300</i>	<i>0.300</i>	<i>0.300</i>	<i>0.300</i>
<b>բնական գազ. մլրդ մ<sup>3</sup>/ տարեկան</b>	<b>1997</b>	<b>1998</b>	<b>1999</b>	<b>2000</b>	<b>2001</b>	<b>2002</b>	<b>2003</b>	<b>2004</b>	<b>2005</b>	<b>2006</b>	<b>2007</b>
սպառում	12.360	13.053	15.800	18.710	20.110	22.182	26.714	28.307	34.525	39.328	տվյալ չկա
արդյունահանում	0.317	0.714	0.921	0.807	0.392	0.475	0.707	0.867	1.132	1.142	տվյալ չկա
ներմուծում	12.089	12.478	15.182	18.135	19.871	21.578	26.046	27.410	33.514	տվյալ չկա	տվյալ չկա
<i>բնական գազի Թուրքիայի սպացուցված պաշարները/ մլրդ մ<sup>3</sup></i>	<i>11.142</i>	<i>11.035</i>	<i>11.821</i>	<i>11.214</i>	<i>11.071</i>	<i>11.071</i>	<i>10.714</i>	<i>10.714</i>	<i>10.714</i>	<i>10.714</i>	<i>10.714</i>
<b>Աղբյուրը՝ US Energy Information Administration:</b>											

Ներկայում գոյություն ունեն առնվազն երկու ուղղություններ, որոնց առնչությամբ Թուրքիան փորձում է ստանձնել հանգուցային դերակատարություն

- միջազգային շուկա նավթի առաքումը,
- Եվրամիությանը մերձավորարևելյան ու կասպյան-կենտրոնաասիական բնական գազով ապահովելը:

Անկարայի որոշումը՝ ձեռնամուխ լինել միջուկային էներգիայի զարգացմանը, միգուցե սկզբնական շրջանում կունենա սոսկ տեղային նշանակություն<sup>1</sup>, բայց պետք չէ բացառել, որ Թուրքիայում նպատակ է դրված հետագայում դերակատարություն ստանձնել նաև էլեկտրաէներգիայի առաջու վաճառքի մերձավորարևելյան և բալկանյան շուկաներում, ուր գրեթե բոլոր երկրներում շարունակվում է տնտեսական աճի դինամիկան:

### Նավթ

Կարելի է ասել, որ սև ոսկու միջազգային վաճառքի գործում Թուրքիան անուղղակիորեն ներգրավված էր 20-րդ դարի սկզբից, այն բանից ի վեր, երբ Ռուսական կայսրության նավթային գլխավոր տերմինալից՝ Բաթումից, կասպյան նավթը Բոսֆոր և Դարդանեղ նեղուցներով սկսեց հոսել միջազգային շուկա: Ժամանակի ընթացքում նավթի միջազգային շուկայում նեղուցների նշանակությունը միայն աճել է, և այսօր էլ այդ դինամիկան պահպանվում է: Այսպես, եթե 1996թ. ընթացքում Բոսֆորով և Դարդանեղով տեղափոխվել է մոտ 60 մլն տոննա նավթ, ապա 2006թ.՝ 143.4 մլն տոննա: Այս տարի նախատեսվում է, որ այդ թիվը կտատանվի 190-200 մլն տոննայի միջև<sup>2</sup>:

Սակայն նավթի միջազգային շուկայում միջնորդական դերակատարություն ստանձնելու մասին Անկարայում, թերևս, առաջին անգամ սկսեցին լրջորեն մտածել 1977թ., երբ շարք մտավ «Քիրքուկ (Իրաք)-Ջեյհան (Թուրքիա)» նավթամուղը: 2003թ. իրաքյան պատերազմը ժամանակավորապես դադարեցրեց նավթամուղի աշխատանքը: Հետագայում «Քիրքուկ-Ջեյհանի» գործարկումը բազմիցս դադարեցվում էր իրաքցի զինյալների հարձակումների պատճառով: Թեև նավթամուղի տեխնիկական հնարավորությունները թույլ են տալիս օրական արտահանել 1.6 մլն բարել նավթ, բայց 2007թ. վերջին օրական թուրքական Ջեյհան նավահանգիստ էր արտահանվում 150-200 հազ. բարել նավթ: 2008թ. այդ թիվը հասավ 400 հազ.-ի: Առաջիկայում, սակայն, նավթամուղը կարող է աշխատել իր հզորության ողջ ծավալով: Այս տարի հունվարի 7-ին Իրաքի նավթի նախարար Հուսեյն ալ-Շահրիստանին հայտարարեց իրաքյան 9 խոշոր նավթահանքերի և 2

<sup>1</sup> Թուրքիայի պետական մարմինների կանխատեսման համաձայն՝ առաջիկա տարիներին այդ երկրի էներգետիկ սեկտորում տարեկան աճը տատանվելու է 6-8% շրջանակներում (աղբյուրը՝ *Republic of Turkey, Ministry of Foreign Affairs, "Turkey's Energy Strategy", 2008*).

<sup>2</sup> Աղբյուրը՝ *Republic of Turkey, Ministry of Foreign Affairs, "Turkey's Energy Strategy", 2008*.

գազահանքերի շահագործման նպատակով միջազգային մրցույթի անցկացման մասին: Ներկայացված հաշվարկի համաձայն՝ եթե այդ նավթահանքերը սկսեն շահագործվել, ապա Իրաքի նավթի օրական արդյունահանումը ներկայիս 2.5 մլն բարելից առաջիկա 4-5 տարիներին կհասնի 6 մլն բարելի: Նման պայմաններում «Քիրքուկ-Ջեյհան» նավթամուղն, ըստ ամենայնի, կրկին կաշխատի իր հզորության ողջ ծավալով:

Ինչպես հայտնի է, 2006թ. հուլիսի 13-ին նույն Ջեյհան նավահանգստում տեղի ունեցավ 2002թ. սեպտեմբերից կառուցվող «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նավթամուղի բացման հանդիսավոր արարողությունը: Չնայած 2008թ. օգոստոսին այդ թվում վրաց-ռուսական պատերազմի հետևանքով նավթամուղը հարկադրված էր մոտ 20 օր դադարեցնել աշխատանքը, սակայն 2009թ. սկզբից այն կրկին անցավ իր հզորության ողջ ծավալին՝ օրական 1 մլն բարել:


2005թ. սեպտեմբերի 26-ին իտալական «Eni» և թուրքական «Calik Energy» էներգետիկ ընկերությունների միջև կնքված փոխըմբռնման հուշագրի համաձայն՝ կողմերը 2007-ից ձեռնամուխ եղան «Սամսուն-Ջեյհան» նավթամուղի կառուցմանը, որը Թուրքիայի սևծովյան Սամսուն նավահանգստից ռուսական ու կասպյան նավթը պետք է հասցնի Ջեյհան: Ըստ նախագծի՝ նավթամուղը պատրաստ կլինի 2010թ.՝ առավելագույնը օրական 1.5 միլիոն բարել թողունակությամբ:

Ըստ 2007թ. հոկտեմբերի 23-ին Անկարայում Թուրքիայի էներգետիկայի նախարար Հիլմի Գյուլերի և Իսրայելի ենթակառուցվածքների նախարար Բենիամին Բեն-Էլիզերի միջև ձեռք բերված պայմանավորվածության՝ կողմերը համաձայնեցին բանակցություններ վարել Ջեյհանից իսրայելական Հայֆա նավահանգիստ տանող նավթամուղի կառուցման շուրջ<sup>1</sup>: Չնայած անցած ժամանակահատվածում թուրք-իսրայելական հարաբերությունները միայն սրվել են և բանակցությունների ինչ-որ արդյունքների մասին առայժմ ոչինչ հայտնի չէ, սակայն փաստն այն է, որ կողմերից ոչ մեկը չի հայտարարել նախագծի փակման մասին:

<sup>1</sup> Նավթամուղից բացի պետք է անցկացվի նաև գազամուղ, ջրմուղ, էլեկտրաէներգիայի բարձրավոլտ գիծ ու օպտիկամանրաթելային կաբել:

Նկար 1

Թուրքիայում գոյություն ունեցող և նախագծվող խոշոր նավթամուղները



1. «Քիրքուկ-Ջեյհան» նավթամուղ, գործում է 1977թ., առավելագույն թողունակությունն օրական 1.6 մլն բարել:
2. «Բարու-Թրիլիսի-Ջեյհան» նավթամուղ, գործում է 2006թ., առավելագույն թողունակությունն օրական 1 մլն բարել:
3. «Սամսուն-Ջեյհան» նավթամուղ, նախատեսվում է շարք մտցնել 2010թ., առավելագույն թողունակությունն օրական 1.5 մլն բարել:
4. «Ջեյհան-Հայֆա» նավթամուղ, բանակցությունների փուլում է:
5. Ներկայում օրական մոտ 3 մլն բարել նավթ է հոսում Բոսֆոր-Դարդանել նեղուցներով:

Թուրքիայում լուրջ ներդրումներ են կատարվում նաև նավթավերամշակման հզորությունների մեծացման ուղղությամբ: Արդեն իսկ առկա ծրագրերի համաձայն՝ առաջիկա մի քանի տարիներին Անկարան ավելի քան կրկնապատկելու է այդ ոլորտում առկա սեփական կարողությունները՝ գերազանցապես իր միջերկրածովյան նավահանգիստներում (առաջին հերթին Ջեյհանում) կենտրոնացած նավթավերամշակման գործարանների հզորությունը հասցնելով օրական մոտ 2 մլն բարելի<sup>1</sup>:

Արևմտյան աղբյուրների փոխանցմամբ՝ եթե նշված ծրագրերն իրականություն դառնան, ապա Ջեյհանը կդառնա միջազգային նավթի շուկայի հանգուցային կետերից մեկը՝ որոշ հաշվարկների համաձայն, ապահովելով աշխարհի նավթի փոխադրման մոտ 5.5%-ը<sup>2</sup>: Մեկ այլ տվյալի համա-

<sup>1</sup> Վերջին՝ 2007թ. տվյալների համաձայն՝ այդ թիվը կազմում էր օրական 714 հազ. բարել (աղբյուրը՝ *US Energy Information Administration*).

<sup>2</sup> Աղբյուրը՝ *Turkey: Gul OKs Nuclear Plant Legislation, Stratfor, November 20, 2007.*

ձայն՝ եթե ի հավելումն արդեն առկա նավթամուղների, նշված ողջ նախագծերը իրականություն դառնան, ապա 2012թ. Թուրքիայով կանցնի աշխարհի նավթային հոսքերի 6-7%-ը<sup>1</sup>:

### **Բնական գազ**

Էլ ավելի տպավորիչ են Թուրքիայի ձեռքբերումները բնական գազի փոխադրման ոլորտում:

2001թ. գործում է Իրանը Թուրքիային կապող «Թավրիզ-Անկարա» գազամուղը, որը տարեկան թուրքական կողմին ապահովում է միջինը 7.5 մլրդ մ<sup>3</sup> բնական գազով: Սակայն վերջին շրջանում թուրք-իրանական մերձեցման ֆոնին հատկապես ակտիվ բանակցություններ են ընթանում Թուրքիայի տարածքով իրանական գազը դեպի Եվրոպա փոխադրելու և այդ նպատակով իրանա-թուրքական նոր գազամուղ կառուցելու հարցի շուրջ: 2008թ. նոյեմբերի 17-ին Թեհրանում Իրանի նավթի նախարար Ղուլամհոսեյն Նոզարիի հետ փոխընթացման հուշագիր կնքելուց հետո Թուրքիայի Էներգետիկայի նախարար Հիլմի Գյուլերը հայտարարեց, թե Անկարան մոտ \$12 մլրդ է ներդնելու իրանական խոշորագույն «Հարավային Փարս» գազահանքի 22-րդ, 23-րդ և 24-րդ հատվածներում կապույտ վառելիքի արդյունահանման<sup>2</sup> և Պարսից ծոցի ափին գտնվող իրանական Ասալույեհ նավահանգստից մինչև թուրք-իրանական սահմանին մոտ գտնվող թուրքական Բազարգան բնակավայր մոտ 1 850 կմ-ոց գազամուղ կառուցելու համար<sup>3</sup>:

2006թ. դեկտեմբերի 15-ից, փաստորեն, շարք է մտել նաև «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» կամ «Հարավկովկասյան» գազամուղը (*South Caucasus Pipeline*), որի փոխադրման տարեկան հզորությունը կազմում է մոտ 8 մլրդ մ<sup>3</sup>: Նախատեսվում է, որ այն թուրքական, իսկ հետո նաև եվրոպական շուկա կհասցնի ադրբեջանական<sup>4</sup> ու չի բացառվում նաև դազախական և

<sup>1</sup> Աղբյուրը՝ *Republic of Turkey, Ministry of Foreign Affairs, "Turkey's Energy Strategy", 2008.*

<sup>2</sup> Նախատեսվում է, որ այդ հատվածներից թուրքական կողմը տարեկան կարդյունահանի մոտ 17 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ, որի կեսը կարող է օգտագործել իր ներքին սպառման համար:

<sup>3</sup> Իրանն ընդհանրապես առաջարկում է Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա կառուցել առանձին մի գազամուղ՝ «*Persian Pipeline*», որն ունենալով ավելի քան 3 200 կմ երկարություն և արժենալով մոտ \$6 մլրդ՝ իրանական գազն ուղղակի կհասցնի եվրոպական շուկա:

<sup>4</sup> Հիմնականում «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազամուղի համար էլ նախատեսված է Կասպիցում գտնվող ադրբեջանական «Շահ Դենիզ» գազահանքի շահագործումը, ուր ներկայում տարեկան արդյունահանվում է մոտ 8 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ: 2011-2012թթ. հետո, երբ կսկսի աշխատել գազահանքի շահագործման երկրորդ հերթը, «Շահ Դենիզում» կապույտ վառելիքի տարեկան արդյունահանումը կավելանա ևս 8 մլրդ մ<sup>3</sup>-ով: Արևմտյան գնահատականների համաձայն՝ «Շահ Դենիզում» առկա կապույտ վառելիքի ծավալները կազմում են մոտ 1.2 տրլն մ<sup>3</sup>:

թուրքմենական բնական գազը<sup>1</sup>:

Հատկապես Թուրքմենստանի հետ Անկարայում լուրջ հույսեր են կապում: Այն ընթացքում, ինչ բրիտանական «*Gaffney, Cline & Associates Ltd.*» ընկերությունն անցկացնում էր թուրքմենական բնական գազի ընդհանուր պաշարների աուդիտը, 2008թ. մայիսի 19-20-ը Բաքվում տեղի ունեցան Ադրբեջանի ու Թուրքմենստանի նախագահների բանակցությունները, որոնք նվիրված էին Ադրբեջանի տարածքով դեպի Թուրքիա թուրքմենական կապույտ վառելիքի արտահանման հնարավորությանը: Սեպտեմբերին՝ վրաց-ռուսական պատերազմից հետո, Աշխաբադ այցելեց Թուրքիայի էներգետիկայի նախարար Հիլմի Գյուլերը, հոկտեմբերին՝ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդոհանը: 2008թ. հոկտեմբերի 14-ին հրապարակվեցին «*Gaffney, Cline & Associates Ltd.*»-ի արդյունքները. Թուրքմենստանի բնական գազի ընդհանուր պաշարները գնահատվեցին ավելի քան 27.67 տրլն: Իսկ նոյեմբերի 29-ին Թուրքմենբաշի քաղաքում կայացան Գուրբանգուլի Բերդիմուհամեդովի, Իլհամ Ալիևի և Աբդուլա Գյուլի եռակողմ բանակցությունները՝ դարձյալ էներգետիկ հարցերի շուրջ:

Էրզրումում «Թավրիզ-Անկարա» և «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազամուղները միանում են իրար և հանդիսանալու են առաջիկայում<sup>2</sup> կառուցվելիք «*Nabucco*» գազամուղի առաջնային մատակարարները: «*Nabucco*»-ն Էրզրումը Բուլղարիայի, Ռումինիայի ու Հունգարիայի տարածքով կապելու է ավստրիական խոշորագույն «Բաումգարտեն» գազային հանգույցի հետ: Գազամուղի կառուցման առաջին փուլի ավարտից՝ 2014թ. հետո տարեկան այն կարող է փոխադրել մոտ 8 մլրդ մ<sup>3</sup>, իսկ 2019թ. սկսած, երբ ենթադրաբար կավարտվի գազամուղի կառուցման երկրորդ փուլը<sup>3</sup>, «*Nabucco*»-ի փոխադրող հզորությունը կհասնի տարեկան 31 մլրդ մ<sup>3</sup>:

Թուրքիան Եվրոպային կապող երկրորդ խոշոր գազամուղը 2007թ. նոյեմբերի 18-ին պաշտոնապես բացված «Թուրքիա-Հունաստան» (*Turkey-Greece Interconnector*) գազամուղն է, որի տարեկան թողունակությունը

<sup>1</sup> Այդ նպատակով, ըստ նախագծի, 2012թ. հետո գազամուղի տարեկան թողունակությունը պետք է հասցվի մինչև 20 մլրդ մ<sup>3</sup>-ի:

<sup>2</sup> 2009թ. հունվարի 26-27-ը Բուլղարիայում կայացած «Nabucco»-ի կառուցման գծով գազաթափողովի արդյունքում որոշվեց, որ գազամուղի շինարարության սկիզբը 2009թ. հետաձգվում է և այն կսկսվի առաջիկա երկու տարիների ընթացքում: Աճեց նաև գինը՝ նախկին \$9-10 մլրդ-ի փոխարեն գազամուղի կառուցումը գնահատվեց \$11.8-13.1 մլրդ:

<sup>3</sup> Երկրորդ փուլում ծրագրվում է տեղակայել կոմպրեսորային լրացուցիչ կայաններ, ինչը կմեծացնի գազամուղի թողունակությունը:

կազմում է 11.5 մլրդ մ<sup>3</sup>: Նախատեսվում է, որ թուրք-հունական գազամուղը շարունակվելու է իտալական ուղղությամբ՝ «Թուրքիա-Հունաստան-Իտալիա» (*Turkey-Greece-Italy Interconnector*) գազամուղի տեսքով, որի կառուցումը պետք է ավարտվի 2012թ.:

2005թ. նոյեմբերի 17-ին պաշտոնապես բացվեց Ռուսաստանը Թուրքիային Սև ծովի հատակով կապող «Երկնագույն հոսք» (*Blue Stream*) գազամուղը: Նախատեսվում է, որ 2010թ. գազամուղը կհասնի փոխադրման իր առավելագույն հզորությանը՝ 16 մլրդ մ<sup>3</sup> տարեկան, ինչպես նաև չի բացառվում, որ այն իր շարունակությունը կունենա Թուրքիա-Բուլղարիա-Սերբիա-Խորվաթիա-Հունգարիա և Թուրքիա-Լիբանան/Թուրքիա-Իսրայել ուղղություններով:

Գոյություն ունեն ևս երկու նախագծեր, որոնք եգիպտական ու իրաքյան բնական գազը պետք է հասցնեն Թուրքիա:

Առաջինը «*Arab Gas Pipeline*» գազամուղն է, որը եգիպտական գազը Հորդանանի և Սիրիայի միջոցով պետք է հասցնի Թուրքիա: Գազամուղը մինչև Սիրիա կառուցված է, և 2008թ. հունվարի 4-ին Անկարան ու Դամասկոսը պայմանավորվեցին գազամուղը երկարացնել մինչև Թուրքիա, որի շինարարական աշխատանքները պետք է ավարտվեն 2011թ.: Ըստ նախնական տվյալների՝ այդ գազամուղի միջոցով Թուրքիան տարեկան կկարողանա ստանալ մինչև 5 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ, և Թուրքիայի տարածքում «*Arab Gas Pipeline*»-ը միանալու է «*Nabucco*»-ին:

Երկրորդ նախագիծը իրաքյան գազը Թուրքիայի տարածքով դարձյալ դեպի Եվրոպա հասցնելն է: 2007թ. օգոստոսի 7-ին Անկարայում Թուրքիան ու Իրաքը ստորագրեցին փոխըմբռնման հուշագիր՝ խնդրի առնչությամբ բանակցություններ սկսելու համար, սակայն մինչ օրս որևէ կոնկրետ արդյունքի մասին հայտնի չէ: Հնարավոր է, որ իրավիճակը փոխվի Իրաքում նոր գազահանքերի շահագործումից հետո, որոնց առնչությամբ, ինչպես արդեն նշել ենք, այս տարվա հունվարի 7-ին հայտարարվել է միջազգային մրցույթ:


Եվ վերջապես, Թուրքիան ծրագրում է իր նավահանգիստներում՝ Իզմիր, Ջեյհան, կառուցել հեղուկ գազի (*LNG*) ստացման առնվազն երեք տերմինալներ, որոնք կկարողանան կապույտ վառելիք ստանալ ողջ աշխարհից: Հայտնի է, օրինակ, որ Իզմիրի մոտ կառուցվելիք տերմինալը տարեկան Եգիպտոսից պետք է ընդունի ավելի քան 7.5 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ<sup>1</sup>:

<sup>1</sup> Ներկայում Թուրքիան ունի հեղուկ գազի ստացման միայն մեկ տերմինալ Ստամբուլի մոտ, որն, օրինակ, 2004թ. Ալժիրից ներմուծել է մոտ 4 մլրդ մ<sup>3</sup> բնական գազ, իսկ Նիգերիայից գրեթե 1.3 մլրդ մ<sup>3</sup>:



Նկար 2

Թուրքիայում գոյություն ունեցող և նախագծվող խոշոր գազամուղները



1. «Թավրիզ-Անկարա» գազամուղ, գործում է 2001թ., առավելագույն թողունակությունը տարեկան 7.5 մլրդ մ<sup>3</sup>:
2. «Երկնագույն հոսք» գազամուղ, գործում է 2005թ., առավելագույն թողունակությունը տարեկան 16 մլրդ մ<sup>3</sup>:
3. «Բաքու-Թբիլիսի-Էրզրում» գազամուղ, գործում է 2006թ., առավելագույն թողունակությունը տարեկան 8 մլրդ մ<sup>3</sup>:
4. «Թուրքիա-Հունաստան» գազամուղ, գործում է 2006թ., առավելագույն թողունակությունը տարեկան 11.5 մլրդ մ<sup>3</sup>:
5. «Arab Gas Pipeline» գազամուղ, նախատեսվում է շարք մտցնել 2011թ.:
6. «Nabucco» գազամուղ, նախատեսվում է շարք մտցնել մինչև 2020թ., առավելագույն թողունակությունը տարեկան 31 մլրդ մ<sup>3</sup>:
7. «Թուրքիա-Իսրայել» գազամուղ, բանակցությունների փուլում է:
8. «Իրաք-Թուրքիա» գազամուղ, բանակցությունների փուլում է:
9. «Ասալույեհ (Իրան)-Բազարգան (Թուրքիա)» գազամուղ, բանակցությունների փուլում է:

### Միջուկային էներգիա

Թուրքիայի Հանրապետության պատմության ընթացքում Անկարան չորս անգամ փորձել է ձեռնամուխ լինել միջուկային էներգիայի զարգացմանը, սակայն միշտ էլ ի հայտ են եկել անհաղթահարելի խոչընդոտներ՝ ֆինանսական խնդիրներից մինչև ռազմական հեղաշրջումներ: 2007թ. նոյեմբերի 8-ին թուրքական խորհրդարանը հավանություն տվեց մի օրի-

նագծի, ըստ որի նախատեսվում է մինչև 2012թ. շարք մտցնել մոտ 5 հազ. մզվտ ընդհանուր հզորությամբ ռեակտորներ<sup>1</sup>: Նույն թվականի նոյեմբերի 20-ին նախագահ Աբդուլա Գյուլն իր ստորագրությամբ վավերացրեց օրինագիծը: Անցած տարվա մարտի 24-ին մեկնարկեց Միջերկրական ծովի ավազանի գտնվող Մերսին քաղաքի մոտ նախատեսված ատոմակայանի կառուցման միջազգային մրցույթը: Կես տարի անց՝ 2008թ. սեպտեմբերի 24-ին, մրցույթի ավարտից հետո պարզ դարձավ, որ 13 պոտենցիալ մասնակիցներից հայտ է ներկայացրել միայն ռուսական «Атомстройэкспорт», «Интер РАО ЕЭС» և թուրքական «Park Teknik» ընկերություններից կազմված կոնսորցիումը: 2008թ. դեկտեմբերին Թուրքիայի ատոմային էներգիայի գործակալությունը (TAEK) հայտարարեց, թե կոնսորցիումի ներկայացրած առաջարկությունը համապատասխանում է պահանջված չափանիշներին: Չնայած ավելի ուշ՝ 2009թ. հունվարի 19-ին, երբ հայտնի դարձավ, որ կոնսորցիումի կողմից կառուցվելիք ատոմակայանի առաջարկած էլեկտրաէներգիայի մեկ կվտ-ի գինը զգալիորեն բարձր է ներկայում թուրքական շուկայում առկա գնից<sup>2</sup> և այդ կապակցությամբ չբացատվեց, որ միջազգային մրցույթը կարող է նորից անցկացվել, սակայն հունվարի 22-ին Թուրքիայի էներգետիկայի նախարար Հիլմի Գյուլերը հայտարարեց, թե աշխատանքները շարունակվում են, և մրցույթի արդյունքները չեղյալ չեն հայտարարվի:

Ըստ առկա տեղեկությունների՝ կոնսորցիումը Մերսինից ոչ հեռու գտնվող Ակկոյու բնակավայրի մոտ հիմնելու է ռուսական «BBЭP-1200» տեսակի չորս ռեակտորներ, որոնք բոլորը միասին տարեկան կարող են արտադրել 4 800 մզվտ էլեկտրաէներգիա: Ատոմակայանի կառուցումը թուրքական պետությանը կարժենա մոտ \$7.5 մլրդ: Նախատեսվում է, որ այն պետք է պատրաստ լինի 2012թ.<sup>3</sup>: 15 տարվա ընթացքում Թուրքիան կոնսորցիումից գնելու է 415.5 մլրդ կվտ/ժ էլեկտրաէներգիա՝ վճարելով \$86.3 մլրդ: Անկարայի հաշվարկների համաձայն՝ մինչև 2020թ. ատոմակայաններն արտադրելու են Թուրքիայում սպառվող էլեկտրաէներգիայի մոտ 8%-ը, իսկ 2030թ. այդ թիվը

<sup>1</sup> Նշենք, որ այդ ոլորտի արևմտյան մասնագետները կասկած են հայտնում, թե մինչև 2012թ. թուրքական կողմին կհաջողվի կյանքի կոչել հայտարարված ծրագիրը՝ հատկապես ներկայիս միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, սակայն ավելացնում են, որ ավելի երկար ժամանակահատվածում Անկարան կարող է հասնել իր նպատակին:

<sup>2</sup> Այսօր Թուրքիայում մեկ կվտ էլեկտրաէներգիայի գինը տատանվում է \$0.04-0.14 (4-ից 14 ԱՄՆ սենթ) միջև: Մինչդեռ կոնսորցիումի առաջարկության համաձայն՝ ապագա ատոմակայանը պետք է մեկ կվտ էլեկտրաէներգիան վաճառեր ավելի քան \$0.21: Ավելի ուշ կոնսորցիումը պատրաստակամություն հայտնեց վերանայել այդ գինը՝ այն նվազեցնելով:

<sup>3</sup> Փետրվարի 13-ին Մոսկվայում կայացած Դմիտրի Մեդվեդև-Աբդուլա Գյուլ բանակցություններից հետո ռուսական ՋԼՄ-ը գրեցին, թե կոնսորցիումն արդեն 2009թ. գարնանը կստանա Ակկոյուի ԱԷԿ-ի կառուցման պատվերը, իսկ շինարարությունը կտևի 6 տարի:

հասնելու է 20%-ի<sup>1</sup>: Ակկույուի ԱԷԿ-ից բացի, թուրքական կառավարությունը մտադիր է մինչև 2013թ. ևս երկու տեղատեղայիններ կառուցել: Առայժմ հայտնի է մեկի վայրը՝ Սն ծովի ափին գտնվող Սինոպ քաղաքի մոտ:

**Հետևություններ և հեռանկար.  
առնչություններ Հայաստանի ազգային անվտանգությանը**

Միջազգային նշանակության էներգետիկ հանգույց դառնալու Թուրքիայի ռազմավարությունն առնվազն հետապնդում է երկու նպատակ:

Առաջին՝ ներկայում ընթացող միջազգային քաղաքական-տնտեսական համակարգի ձևափոխման գործընթացում ապահովել Անկարայի պատշաճ ներկայությունը որոշումների կայացման գլոբալ մեխանիզմում: Նախկինում դա արվում էր մեծ մասով ՆԱՏՕ անդամության և Մերձավոր Արևելքում ու իսլամական աշխարհում ԱՄՆ կարևորագույն դաշնակիցը լինելու միջոցով: Սակայն նոր պայմաններում, երբ ՆԱՏՕ թուլացումն ու ամերիկա-թուրքական հարաբերությունների վատացումը հանգեցնում են միջազգային համակարգում Թուրքիայի ազդեցության կրճատմանը, Անկարայի պատկերացմամբ՝ էներգետիկ հանգույց-երկրի ընձեռած հնարավորությունները կարող են փոխհատուցել այդ կորուստները:

Մյուս կողմից, Թուրքիայի էներգետիկ ռազմավարությունը պետք է դիտարկել այդ երկրի տարածաշրջանային քաղաքականությունում տեղի ունեցող փոփոխությունների համատեքստում: Եթե Թուրքիայի Հանրապետության հիմնադրումից ի վեր Անկարան Արևմտյան աշխարհի հենակետն էր Մերձավոր Արևելքում, ապա այսօր Թուրքիայում փորձում են վերստին ստանձնել Օսմանյան կայսրության առանցքային դերակատարությունը Մերձավոր Արևելքում, և Անկարայի էներգետիկ հանգույց դառնալը կոչված է մեծացնելու Թուրքիայի ազդեցությունը տարածաշրջանում՝ տարածաշրջանի երկրներին ուղղելով դեպի Անկարա: Օրինակ, այդ տեսանկյունից շատ ավելի բնութագրական է Անկարայի որոշումը՝ հարաբերությունների նորմալացման գործընթաց սկսել Երևանի հետ, քան Էրդոհանի կառավարության աննախադեպ սուր մոտեցումը Գազայում Իսրայելի գործողությունների նկատմամբ:

Հեռանկարի իմաստով էական է այն հարցը, թե անվտանգության ինչ համակարգ է առաջարկելու Թուրքիան փոփոխվող տարածաշրջանին (Մերձա-

<sup>1</sup> Աղբյուրը՝ *Saban Kardas, «Is the Russian-Led Consortium Trying to Overcharge Turkey for Its First Nuclear Power Plant?», January 26, 2009, Eurasia Daily Monitor.*

վոր Արևելք, Հարավային Կովկաս, Բալկաններ): Ակնհայտ է, որ տարածաշրջանի էներգետիկ պատկերի ձևափոխությունը (իսկ այդպիսին է նաև Թուրքիայի՝ էներգետիկ հանգույցի վերածվելը) չի կարող տեղաշարժեր չառաջացնել տարածաշրջանային անվտանգության համակարգում: Միգուցե Անկարայի նախաձեռնած «Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմը» Թուրքիայի ենթադրվող առաջարկության մի մասն է, սակայն գրեթե կասկածից վեր է, որ Անկարայի հիմնական նախաձեռնությունները դեռ առջևում են: Շատ բան կախված է Իրաքում, Սիրիա-Իսրայել ուղղությամբ, Իրանի ու Հայաստանի հետ հարաբերություններում և ընդհանրապես Հարավային Կովկասում ընթացող զարգացումների ելքից:

Հայաստանի պարագայում էական է այն հանգամանքը, որ Թուրքիայի «փոխվելը» և Մերձավոր Արևելքում նոր իրավիճակի ի հայտ գալը կարող են այդ տարածաշրջանը «բացել» մեզ համար՝ մեծացնելով Երևանի ներգրավվածությունը նշված ուղղությամբ: Գործնական հարթությունում դա նշանակում է, որ առաջիկայում մեր երկրի ազգային անվտանգության համակարգի վրա մերձավորարևելյան զարգացումները կարող են ունենալ ավելի լուրջ ներգործություն:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐ

## *Մերզեյ Մինասյան*

### *Ներածություն*

Հայաստանի Հանրապետությունը վերստին անկախություն ձեռք բերեց 1991թ. և սկսեց ինքնուրույն պետականություն կառուցել՝ իր բոլոր ատրիբուտներով և առանձնահատկություններով, այդ թվում՝ սեփական արտաքին քաղաքականությամբ: Ցանկացած պետության արտաքին քաղաքականություն ոչ միայն այս կամ այն կոնկրետ քայլերի կամ դիվանագետների ու քաղաքական գործիչների գործողությունների, այլ նաև տվյալ երկրի ազգային շահերի իրագործմանն ու պաշտպանությանն ուղղված գիտակցված (երբեմն՝ ոչ լրիվ) երկարատև նպատակների, ծրագրերի կամ մոտեցումների արդյունք է: Մի խոսքով՝ արտաքին քաղաքականության իրականացումը ենթադրում է նաև որոշակի դոկտրինների կամ հայեցակարգերի առկայություն: Շատ դեպքերում այդ հայեցակարգերը ձևավորվում են որպես առանձին փաստաթղթեր (ազգային անվտանգության ռազմավարություններ կամ հայեցակարգեր, արտաքին քաղաքական դոկտրիններ և այլն), վավերացվում են խորհրդարանների կամ պետությունների ղեկավարների կողմից<sup>1</sup>: Որոշ դեպքերում (հատկապես այն երկրներում, որոնք պետականության հարուստ փորձ չունեն) դրանք կարող են լինել այդ պետությունների արտաքին և պաշտպանական քաղաքականության անցկացման և իրականացման ոչ պաշտոնական կամ «թղթի վրա» չամրագրված հայեցակարգային հիմքեր և մոդելներ:

Հայաստանի Հանրապետությունն այս առումով բացառություն չէ: Թեև վերջին տարիներին ընդունվել և պաշտոնապես հաստատվել են տվյալ ոլորտի շատ փաստաթղթեր (Ազգային անվտանգության ռազմավարությունը, Ռազմական դոկտրինը և այլն)<sup>2</sup>, սակայն Երրորդ Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական հայեցակարգային հիմքերը սկիզբ են առնում

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս *Минасян С., Мировой опыт принятия концепции национальной безопасности // 21-й век, №2 (4), 2006* (տուտեքին հրատարակություն):

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս *Минасян С., Стратегия национальной безопасности Республики Армения: процесс принятия и структура документа // <http://www.noravank.am/tu/?page=theme&thid=3&mid=590>, 15.03.2007.*

մոտավորապես 1991-ից, իսկ դրա որոշ տարրեր, ասենք՝ «դարաբաղյան» կամ «թուրքական» վեկտորների գաղափարաբանական և պատմական հիմքերը, սկիզբ են առնում գուցե ավելի վաղ շրջանից: Խոսքը, առնվազն, վերաբերում է խորհրդային իշխանության գոյության վերջին տարիներին, այսինքն՝ 1980-90-ական թթ. սահմանագծին, երբ Հայաստանը դեռ անկախություն ձեռք չէր բերել, բայց երկրի ձևավորվող նոր քաղաքական ընտրանու գործողություններում և տեսական պատկերացումներում արդեն նկատվում էին երկրի արտաքին քաղաքականության վարման և տարածաշրջանի մերձավոր հարևանների հետ հարաբերությունների հաստատման ապագա հայեցակարգային մոտեցումների ուրվագծերը:

### **«Կոմպլեմենտարիզմ»**

Հայաստանի արտաքին քաղաքականության իրագործման նման հիմնարար, հնարավոր է՝ նաև կարևորագույն («դարաբաղյան» վեկտորին գուզընթաց) հայեցակարգերից մեկը դարձավ այսպես կոչված «կոմպլեմենտարիզմը» կամ «փոխլրացման» քաղաքականությունը: Այդ քաղաքականության էությունն (ի դեպ, այն տիպիկ չէ 1990-ական թթ. սկզբին անկախություն ձեռք բերած հետխորհրդային երկրների մեծամասնության համար) այն էր, որ համատեղվի և պահպանվի զուգակշիռը Հարավային Կովկասի տարածաշրջանում գործող և ընդգրկված համաշխարհային ու տարածաշրջանային տերությունների շահերի միջև, այլ ոչ թե իր արտաքին քաղաքականության մեջ կենտրոնանա մի ինչ-որ այլընտրանքային կողմնորոշման վրա, լինի այն «արևմտամետ, «ռուսամետ» կամ, ասենք, «թուրքամետ»:

Այս առումով Հայաստանն իսկապես որոշ չափով առանձնանում էր նախկին խորհրդային շատ հանրապետություններից, թեև նորանկախ Հայաստանի Հանրապետության 1990-ական թթ. սկզբի քաղաքական ընտրանին ընդհանուր առմամբ «սենտիմենտալ» ինչ-որ զգացումներ չէր տածում նախկին ԽՍՀՄ-ի կամ նոր Ռուսաստանի հանդեպ և անկախության էր ձգտում: Ի տարբերություն հարևան Ադրբեջանի և, առավել ևս, կենտրոնաասիական խորհրդային հանրապետությունների, Հայաստանում հակախորհրդային այլախոհության բավական խոր արմատներ կային, որոնք 1990-ական թթ. սկզբին նույնիսկ իշխանության եկած քաղաքական ուժերի շրջանում ռուսաստացության նրբերանգներ էին ստանում: Այնուամենայնիվ, Հայաստանը, բնականաբար՝ կապված իր շուրջ ստեղծված տարածաշրջանային համատեքստի հետ (շատ բանով թուրքական գործոնի սպառնալիքի գիտակցման, բայց հիմնականում Ղարաբաղում ծայր առած պա-

տերազմի պատճառով), չզնաց Ռուսաստանի հետ կապերի բացահայտ խզման և նույնիսկ փորձեց արդյունավետորեն օգտագործել նրա իներցիոն դերի պահպանումն իր արտաքին քաղաքականությունում:

Բնականաբար, և՛ դեպի անկախություն տանող ճանապարհին, և՛ դրա ձեռքբերումից հետո Հայաստանը, ոչ առանց հաջողության, փորձում էր առավելագույնս օգտագործել ԱՄՆ և եվրոպական երկրների աջակցությունը, ինչը զգալիորեն հաշվեկշռում էր դեպի Ռուսաստան կողմնորոշումը անվտանգության և ռազմական համագործակցության հարցերում: Ի դեպ, հարկ է նշել, որ Հայաստանի անկախության վաղ շրջանի որոշ քաղաքական և գաղափարախոսական առաջնորդների (Վազգեն Մանուկյան, Լևոն Տեր-Պետրոսյան) արտաքին քաղաքական հաշվարկներում (թեկուզև մի փոքր իդեալիստական) արտաքին քաղաքականության կոմպլեմենտարիզմը պետք է ներառեր (իսկ մինչև 1993թ. մարտը ներառում էր) նաև Թուրքիան: Հայկական կոմպլեմենտարիզմի առանձին տարրեր նախատեսում էին նաև արտաքին քաղաքական նախաձեռնություններ Վրաստանի առնչությամբ:

Կոմպլեմենտարիզմի առավել արդյունավետ դրսևորում պետք է համարել հենց անկախության առաջին երկու տարիները՝ 1991-ը և 1992-ը, երբ Հայաստանը Ղարաբաղի պատերազմի թեժ պահին կարողացավ օգտագործել ունիկալ արտաքին քաղաքական կոնյունկտուրան, երբ Երևանը զենք ու ռազմատեխնիկա էր ստանում ռուսներից մարտական գործողությունները շարունակելու համար, փող պետականակերտման համար (և սպառազինություններ գնելու համար նույն Ռուսաստանում)՝ ամերիկացիներից, պարեն և հումանիտար օգնություն բնակչության համար՝ եվրոպացիներից (ընդ որում՝ այդ ամենը հիմնականում ստանում էր Թուրքիայի միջոցով), իսկ Ադրբեյջանի դեմ մարտնչող բանակի համար վառելիք՝ Իրանից: Այսպիսով, հավասար չափով հեռավորություն պահպանելն ու փոխլրացումը Հայաստանի արտաքին քաղաքականությունում իր արդյունավետության առավելագույնին հասավ Լևոն Տեր-Պետրոսյանի նախագահության առաջին ժամկետի ընթացքում, ինչը պետք է համարել «կոմպլեմենտարիզմի» քաղաքականության իրագործման առավել հատկանշական փուլը Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ, թեև այն ժամանակ այն դեռ այդպես չէր անվանվում:

Հայկական կոմպլեմենտարիզմի նոր փուլը, երբ այն իսկապես զուգակշռված դարձավ (համենայնդեպս, հիմնական արտաքին ակտորների և համաշխարհային տերությունների շահերի հաշվառմամբ), սկսվեց 1990-

ական թթ. վերջերին, երկրորդ նախագահ Ռ.Քոչարյանի օրոք և կապված էր նրա գլխավոր ճարտարապետի ու գաղափարախոսի՝ 1998-2008թթ. Հայաստանի ԱԳՆ ղեկավար Վարդան Օսկանյանի անվան հետ, ով էլ հեղինակել է «կոմպլեմենտարիզմ» տերմինը: 1990-ական թթ. առաջին կեսին, չնայած Ռուսաստանի ներսում տիրող խառնաշփոթին, Մոսկվան ինտեգրայով դեռ պահպանում էր զգալի քաղաքական ազդեցությունը և ռազմական ներկայությունը Հարավային Կովկասում, ուստի տարածաշրջանում ռուսական ազդեցության նվազմանը զուգընթաց միայն 1990-ական թթ. վերջերից Հայաստանը «մանր քայլերով» իսկապես կոմպլեմենտարիզմը վերածեց «միաժամանակ մի քանի աթոռի նստելու» միանգամայն հավասարակշռված քաղաքականության: Ընդ որում՝ որոշակի դեպքերում կոմպլեմենտարիզմը հնարավորություն էր տալիս ոչ միայն մարտավարական առումով հավասարակշռել Մոսկվայի, այլև երբեմն ԱՄՆ-ի կամ եվրոպական կառույցների (օրինակ, Ղարաբաղյան բանակցային գործընթացի որոշ փուլերում) հավելյալ ազդեցությունը տարածաշրջանային գործընթացներում: Այսինքն՝ Երևանն սկսեց անցկացնել «հաղորդիչ անոթների» ինքնատիպ քաղաքականություն:

Հենց այսպիսի արտաքին քաղաքականությունն էլ շարունակում է իրականացվել այսօր Հայաստանում, չնայած մամուլում և հայ որոշ քաղաքական գործիչների (բնականաբար, հիմնականում ընդդիմադիր ուղղության) հայտարարություններում կոմպլեմենտարիզմի գործնական չկայացածության կամ շուտափույթ վախճանի մասին պերմանենտ հնչող մեղադրանքներին: Եվ սա՝ չնայած այն բանին, որ տարածաշրջանային յուրաքանչյուր ֆորսմաժորային իրավիճակ, օրինակ, իրադարձությունները Հարավային Օսիայում 2008թ. օգոստոսին և ռուս-արևմտյան դիմակայությունը, առիթ է տալիս Հայաստանի իշխանություններին, անկախ նրանից, թե ով է տվյալ պահին գտնվում երկրի ղեկի մոտ (երկրի երեք նախագահներն էլ տարբեր մեթոդներով, բայց միանման արդյունավետությամբ օգտագործել են «կոմպլեմենտարիզմը»), կրկին ի ցույց դնել սույն քաղաքականության հեռանկարայնությունը:

Տեսականորեն գուցե կա այլընտրանք կոմպլեմենտարիզմին. մամուլում և քաղաքական գործիչների ելույթներում պարբերաբար հնչել և հնչում են կողմնորոշվելու և վերջապես «կողմնորոշում» որդեգրելու կոչեր. 1990-ական թթ. դրանք հիմնականում «ռուսամետ» էին, իսկ ահա 2001-ից՝ «արևմտամետ» կամ «ամերիկամետ»: Բայց, կարծում ենք, իրականության



մեջ այդ կոչերը կոմպլեմենտարիզմը ռեզիլիանտ էնթալթիզմի փորձեր չէին, այլ, ավելի շուտ, պերմանենտ կոնյունկտուրային քաղաքական պայքարի և այս կամ այն քաղաքական կուսակցության կամ առաջնորդի կարճաժամկետ նպատակների իրականացման գործիքներ: Հայաստանի իշխանությունների թեքումն այս կամ այն կողմի վրա միշտ հանգեցնում է ընդդիմադիր ուժերի հոետորական մեղադրանքներին կոմպլեմենտարիզմից հեռանալու շուրջ, ոչ ավելին...

Իհարկե, Հայաստանի քաղաքական կուսակցությունների մի մասը որդեգրել է նման հայտարարություններ՝ կախված պոտենցիալ ընտրագանգվածից կամ էլ, բնականաբար, հնարավոր կամ ցանկալի ֆինանսավորման աղբյուրներից: Օրինակ, հայ կոմունիստների համար դա Ռուսաստանի նկատմամբ կարոտախտով տառապող ավագ սերունդն է, իսկ «արևմտյան կողմնորոշում» ունեցող երիտասարդությունը և ազատական մտավորականությունն ավելի շուտ ՀՀՇ ընտրագանգվածն է և այլն:

Ուստի, «կոմպլեմենտարիզմը» որպես Հայաստանի արտաքին քաղաքական հիմնական դոկտրինի անվանում, նույն հաջողությամբ կարելի էր անվանել, ասենք, «պրագմատիզմ»: Եթե Վ.Օսկանյանը 1990-ական թթ. վերջին օգտագործեր էլ այդ տերմինը, այլ ոչ թե «կոմպլեմենտարիզմը», ոչ ոք տարբերությունը չէր էլ նկատի, իսկ Հայաստանի արտաքին քաղաքականության էությունը, միևնույն է, կմնար այնպիսին, ինչպիսին այն տեսնում ենք այսօր և ինչպիսին, ամենայն հավանականությամբ, կտեսնենք հետագայում: Ավելին, Հայաստանի պարագայում «կոմպլեմենտարիզմը» կարելի է նույնիսկ օգտագործել որպես «իրական» արտաքին քաղաքականություն տերմինի հոմանիշ:

Բայց, ինչպես թվում է, անկախ Վարդան Օսկանյանի, իսկ նրանից առաջ, ասենք, Լևոն Տեր-Պետրոսյանի կամ Վազգեն Մանուկյանի ինտելեկտուալ կամ գաղափարախոսական արժանիքներից, կան նաև այլ իրական պատճառներ՝ կախված ինչպես աշխարհագրությունից ու պատմությունից, այնպես էլ տարածաշրջանային քաղաքական կոնյունկտուրայից: Օրինակ, ի տարբերություն Վրաստանի, որը շատ բան է կորցրել 1990-ական թթ. Ռուսաստանի հետ դիմակայությունում և որը «հնգօրյա պատերազմից» հետո առավել ևս գրեթե ոչինչ չունի կորցնելու Մոսկվայի հետ հարաբերությունների վատթարացումից: Այն ամենը, ինչ կարող էր կորցնել Վրաստանը Ռուսաստանի հետ հարաբերությունների վատթարացումից, արդեն կորցրել է տեսանելի ապագայի համար, այսինքն՝ Աբխազիան և Հարավային Օսիան: Իսկ Հայաստանը կորցնելու բան ունի Մոսկվայի հետ հարաբե-

րությունների կտրուկ վատթարացումից, և դա Ղարաբաղն է: Ուստի, կարելի է ասել, որ (այլ պատճառների կողքին) հայկական կոմպլեմենտարիզմի և Երևանի կողմից Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական հարաբերությունների թեկուզև ներկայիս մակարդակը պահելու անհրաժեշտության կարևորագույն «լոբբիստը», օրինակ, Ադրբեջանն է: Պարզ է, որ Ռուսաստանից Հայաստանի կտրուկ և միակողմանի հեռացումը կարող է հանգեցնել այն բանին, որ Մոսկվան միանգամից անցում կատարի Ադրբեջանի կողմը Ղարաբաղյան հարցում, ինչպես եղել է քանիցս 1990-ական թթ. սկզբին, երբ Բաքուն Մոսկվայից մեծաքանակ սպառազինություն և զգալի քաղաքական աջակցություն է ստացել:

Իհարկե, հայկական «կոմպլեմենտարիզմն» իրականացման լուրջ «տեխնոլոգիական ծախսեր» ունի արդեն: Բարդ և բազմավեկտոր արտաքին քաղաքականություն վարելն ավելի դժվար է, քան պարզ ու միավեկտոր քաղաքականությունը: Հեշտ է խաղալ առաջատար տարածաշրջանային և արտատարածաշրջանային խաղացողների հակասությունների վրա, իսկ ահա համատեղել դրանք՝ բավական բարդ է և, ընդ որում՝ դա ստիպված էս անել գրեթե ամեն օր: Միշտ կա գայթակղություն կանգնել ուժի համաշխարհային կենտրոններից մեկի կողմում և նրա թիկունքի հետևում դիմակայել մյուսին, բայց երբեմն դա նույնիսկ շատ վտանգավոր է լինում. կարող էս «մանրադրամ» դառնալ «աշխարհիս հզորների» խաղում: Ուստի, Հայաստանի համար շատ դժվար է զուգակշռված քաղաքականություն վարել, և դրանից ստացվող շահաբաժիններն էլ ավելի չափավոր են լինում: Բայց, մյուս կողմից, պատասխանատվությունը ևս արդյունքում կիսում էս արտաքին ակտորների հետ, և ռիսկերն էլ ավելի փոքր են լինում ֆորսմաժորային հանգամանքներում:

### *Ղարաբաղյան Mainstream*

Ի տարբերություն կոմպլեմենտարիզմի, դարաբաղյան պրոբլեմատիկան ոչ միայն երկրի արտաքին քաղաքականության իրականացման հայեցակարգային հիմքերից մեկն է, այլ նաև ընդհանրապես նորանկախ հայոց պետականության կերտման գաղափարախոսական հենքն է, առանց որի անհնար կլինեք պատկերացնել մերօրյա Հայաստանի Հանրապետությունը: Միննույն ժամանակ, Երևանն արդեն երկու տասնամյակ բավական արդյունավետորեն օգտագործում է դարաբաղյան գործոնը որպես իր արտաքին քաղաքականության ինքնուրույն ռեսուրս, անկախ Ղարաբաղի

համար Ադրբեջանի հետ ունեցած հակամարտության արդյունքներից<sup>1</sup>:

Հայ քաղաքական էլիտան (ինչպես և ներկայիս կոնտրէլիտան) ցույց է տալիս, որ Հայաստանը պատրաստ է, չնայած բոլոր քաղաքական ու տնտեսական «ծախսերին», իր արտաքին քաղաքականությունը կառուցել անկախ Ղարաբաղյան հակամարտության վիճակից, զարգանալ և շարունակել տարածաշրջանային ու գլոբալ ինտեգրման գործընթացները: Ղարաբաղյան հակամարտության շուրջ առկա դաժան իրականությունը, ցավոք, թույլ չի տալիս հուսալ, որ Ադրբեջանի հետ հարաբերությունները շուտով, կարճաժամկետ կամ նույնիսկ միջնաժամկետ ապագայում կկարգավորվեն: Համապատասխանաբար, անհրաժեշտ է հաշտվել դրա հետ և փորձել, Ղարաբաղյան գործոնից դուրս, հարաբերություններ հաստատել տարածաշրջանի այլ երկրների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և առաջատար համաշխարհային տերությունների հետ: Հայ քաղաքական ընտրանին հույս ունի, որ տարածաշրջանային ինտեգրման համար պայմաններ ստեղծելով և ավելի վստահելի հարաբերությունների ընդհանուր խորապատկերի հաստատմամբ ապագայում կստեղծվի Ադրբեջանի հետ համագործակցության աստիճանական հաստատման դաշտ:

Նման ճանապարհներից մեկն (հնարավոր է՝ կարևորագույն) է համարվում քաղաքական հարաբերությունների հաստատման և դրան հաջորդող՝ Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանի բացման համար պայմանների ստեղծման փորձը: Մեկ այլ՝ ոչ պակաս կարևոր հայեցակարգ է համարվում եվրոպական կազմակերպությունների և համաշխարհային տերությունների շահագրգռության խթանումը Հարավային Կովկասի նկատմամբ՝ հենց հակամարտության առկայությունից ելնելով: Հակամարտության գործոնն օգտագործվում է տարածաշրջանի նկատմամբ տեղեկատվական և քաղաքական հետաքրքրությունը պահելու, ինչպես նաև տնտեսական օգնությունը և քաղաքական աջակցությունը խթանելու համար:

Այլ խոսքերով՝ Երևանը «շահագործում» է Ղարաբաղյան հակամարտության թեման Հայաստանի աշխարհաքաղաքական դերի բարձրացման նպատակով ինչպես տարածաշրջանային ձևաչափով, այնպես էլ համաեվրոպական մակարդակով: Պաշտոնական Երևանի կողմից սեփական խնդիրների լուծման համար արևմտյան քաղաքական ձևաչափի ուղղակի

<sup>1</sup> Մասամբ համանման քաղաքականություն է վարում, օրինակ, Վրաստանը՝ օգտագործելով արխազական և հարավօսական հակամարտություններն ու իր դիմակայությունը Ռուսաստանի հետ՝ որպես կարևոր արտաքին քաղաքական հաղթաթուղթ, զգալի քաղաքական, տնտեսական և այլ դիվիդենդներ ստանալով Արևմուտքից, անգամ անկախ այն բանից, թե ինչպես արդյունքում կզարգանան գործընթացներն Աբխազիայում և Հարավային Օսիայում:

օգտագործման ևս մեկ օրինակ է եվրոպական և ամերիկյան գործոնների գործադրումը որպես Հայաստանի ու Թուրքիայի հարաբերությունների նորմալացման ռեսուրս: Դա, բնականաբար, ուղղակի կապի մեջ է մտնում նաև Ղարաբաղի շուրջ և Ադրբեջանի հետ փոխհարաբերությունների հետագա գործընթացների հետ:

### «Թուրքական վեկտոր»

1993-ից Թուրքիան, կապված Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ակտիվացման հետ, փակեց սահմանը Հայաստանի հետ: Այդ ժամանակվանից ի վեր երկու պետությունների միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ չկան, տնտեսական և առևտրային համագործակցությունն իրականացվում է երրորդ երկրների միջոցով: Մինչև վերջին ժամանակներս Թուրքիան որպես Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման նախապայմաններ մի շարք պահանջներ էր ներկայացնում՝ կապված Ղարաբաղյան հակամարտության, ինչպես նաև հայ սփյուռքի կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի հետ: Միննույն ժամանակ, հարաբերությունների նորմալացման վերոնշյալ նախապայմանները, բացի Ցեղասպանության՝ Անկարայի համար հայ-թուրքական հարաբերությունների ընդհանուր համալիրում ամենասուր և զգայուն հիմնախնդրից, իրականում այն հարցերը չէին, որոնք գերակա են Թուրքիայի կամ էլ թուրքական հասարակության համար:

Կարելի է նույնիսկ պնդել, որ արևելյան հարևանի հետ փակ սահմաններով և լիարժեք հարաբերությունների շարունակվող բացակայությամբ Թուրքիան իր տարածաշրջանային քաղաքականությունը Հայաստանի (և ընդհանրապես ողջ Հարավային Կովկասի) հետ կախվածության մեջ է դրել երրորդ երկրի, այսինքն՝ Ադրբեջանի դիրքորոշումից: Իր կողմից Հայաստանի քաղաքական ընտրանին մոտավորապես 1990-ական թթ. վերջերից ձևակերպեց և սկսեց օգտագործել Ցեղասպանության գործոնի կիրառման հայեցակարգ՝ որպես «ոչկոնվենցիոնալ զենք», սահմանների բացման և Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման հարցում ճնշում բանեցնելու ռեսուրս<sup>1</sup>: Հաշվի առնելով Անկարայի վրա Երևանի ազդեցության հնարավորությունների սահմանափակությունը՝ Հայաստանը

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս *Сафрастьян Р.*, Проблема признания Геноцида во внешней политике Армении: разноуровневый анализ // 21-й век, Информационно-аналитический журнал, Ереван, №1, 2005 (ռուսերեն հրատարակություն):

փորձում էր օգտագործել Ցեղասպանության թեմատիկայի հանդեպ Թուրքիայի հաստուկ զգայականության գործոնը՝ որպես հարաբերությունների նորմալացման խթանիչ միջոց:

Այնուամենայնիվ, գրեթե 15 տարվա (1993-2008թթ.) ողջ ընթացքում հայ-թուրքական հարաբերությունների ինչ-որ հաստատուն էր պահպանվում. Թուրքիան փակ էր պահում հայ-թուրքական սահմանը և փաստորեն իրականացնում էր Հայաստանի հաղորդակցային «կիսաշրջափակում» (ջանալով տնտեսական ճնշման միջոցով հարկադրել Երևանին զիջողությունների գնալ Ցեղասպանության և Ղարաբաղյան հակամարտության հարցերում), իսկ Հայաստանը փորձում էր օգտագործել Ցեղասպանության գործոնն ու Անկարայի վրա Բրյուսելի և Վաշինգտոնի կողմից անուղղակի ազդեցության հնարավորությունը՝ Թուրքիային պարտադրելու համար փոխել դիրքորոշումն ու բացել սահմանը: Երևանն, իհարկե, փորձում էր օգտագործել կոմպլեմենտարիզմի անուղղակի ռեսուրսի հնարավորությունները Թուրքիայի հետ հարաբերությունների իր քաղաքականությունում կամ, առավել ևս՝ Թուրքիայի վրա ԵՄ-ի և ԱՄՆ-ի, իսկ 2008թ. սկսած՝ հնարավոր է նույնիսկ Մոսկվայի միջոցով ճնշում բանեցնելու մեջ:

### ***Եզրակացություն***

Տպավորություն է ստեղծվում, թե հենց «կոմպլեմենտարիզմը», «ղարաբաղյան մեյնսթրիմը» և «թուրքական վեկտորն» են Հայաստանի արտաքին քաղաքականության իրականացման կարևորագույն, թեև, իհարկե, խիստ պայմանական հայեցակարգերը: Բնականաբար, չի կարելի հստակ սահմանագիծ անցկացնել, թե որտեղ է ավարտվում Հայաստանի արտաքին քաղաքականության մեկ և սկսվում մյուս «հայեցակարգը», կամ որոշել, թե դրանցից որն է որ պահին ավելի կարևոր քաղաքականությունն իրականացնելիս, և որն է այս կամ այն պահին ավելի գերակշռող: Ավելի շուտ, դրանք բոլորն էլ միաժամանակ են գործում, պարզապես կախված քաղաքական իրավիճակից՝ ժամանակի որոշակի փուլում դրանցից մի քանիսն առավել հրատապ են լինում, քան մյուսները:

Այսպիսին են հրատապ արտաքին քաղաքական հայեցակարգերի հիմնական շրջանակները, որ ձևակերպել (և իրականացնում) է Հայաստանի քաղաքական էլիտան Երրորդ Հանրապետության գոյության ողջ ընթացքում: Միանգամայն բնական է, որ կարող է շատ հիմնավորված հարց ծագել. ունե՞ր արդյոք հետխորհրդային հայ քաղաքական ընտրանին

իր երկրի արտաքին քաղաքականությունը պլանավորելու և իրականացնելու այլընտրանք:

Թվում է՝ ընդհանուր առմամբ այլընտրանք գրեթե չկար և չէր էլ կարող լինել: Ի դեպ, այլ չէին կարող լինել նաև Հայաստանի արտաքին քաղաքականության իրականացման գնահատականները երկրի անկախության ողջ ընթացքում: Հատկապես եթե հաշվի առնենք այն բարդ աշխարհաքաղաքական ու աշխարհագրական միջավայրը, եզակի և միաժամանակ խառնաշփոթ այն պատմական շրջանը, որի պայմաններում Հայաստանը կատարում էր առաջին քայլերն արտաքին քաղաքական ասպարեզում: Մյուս կողմից՝ անցյալի պատմական և գաղափարաբանական ծանրությունը նույնպես կոշտ շրջանակներ էր ստեղծում անկախ Հայաստանի քաղաքական ընտրանու արտաքին քաղաքական մոտեցումների ձևավորման համար: Ուստի, այնուամենայնիվ, հասկանալի բացթողումների հետ միասին, կարելի է պնդել, որ ընդհանուր առմամբ Հայաստանը վերջին երկու տասնամյակի ընթացքում կարողացել է բավական արդյունավետ կամ էլ, եթե այդպես ավելի հարմար է՝ բավական քիչ կորուստներով ու վնասով անցնել իր արտաքին քաղաքականության ձևավորման և հայեցակարգային կայացման բարդ շրջանը:

**ՌՌՄԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ.  
ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ՊՐԱԳՄԱՏԻՉՄԻ ՇՈՒՐՉ**

*Մերզեյ Մարկեդոնով*

Օգոստոսյան «հնգօրյա պատերազմը» Հարավային Օսիայում արմատապես փոխեց Մեծ Կովկասի աշխարհաքաղաքական լանդշաֆտը: Առաջին հայացքից այդ փոփոխությունները կարծես ուղղակիորեն չեն անդրադարձել ռուս-հայկական երկկողմ հարաբերությունների վրա: Փոխշահավետ ռազմավարական գործընկերության զարգացման և երկու երկրների ու ժողովուրդների պատմական դարավոր բարեկամության մասին խոսքերը պետությունների ղեկավարների այցելությունների, պաշտոնատար անձանց հանդիպումների ու գիտագործնական կոնֆերանսների անփոփոխ ատրիբուտն են մնում: 2008թ. նոյեմբերի 2-ին Ղարաբաղյան հակամարտության կարգավորման վերաբերյալ Մոսկվայի հռչակագրի ստորագրումը շատ փորձագետներ և՛ Ռուսաստանում, և՛ Արևմուտքում գնահատեցին որպես ՌԴ դիրքերի ամրապնդում ինչպես Հարավային Կովկասում ընդհանրապես, այնպես էլ Հայաստանում՝ մասնավորապես:

Սակայն այս ամենը միայն արտաքին ֆոն է, որի հետևում թաքնված են լուրջ խնդիրներ, որոնց օբյեկտիվ դիտարկմանն ու վերլուծությանն է նվիրված սույն հոդվածը (դրանք լռության մատնելու և քաղաքական կենսացների ոճի վերածելու փոխարեն): Հազիվ թե նպատակահարմար է թվարկել բոլոր փաստերը, որոնք վկայում են Ռուսաստանի ու Հայաստանի՝ միմյանց ընդառաջ գնալու մասին: Նախ՝ դա կպահանջի ոչ թե առանձին հոդված, այլ անհամեմատ ավելի լայն ձևաչափի ուսումնասիրություն: Երկրորդ՝ ավելի օգտակար կլինի լուսաբանել և անդրադառնալ «խնդրահարույց կետերին»: Մա էլ, մեր կարծիքով, թույլ կտա ամրապնդել երկկողմ հարաբերությունները նոր Մեծ Կովկասի ձևավորման պայմաններում, ինչպես նաև մեծ թափանցիկություն հաղորդել դրանց:

<sup>1</sup> Քաղաքական և ռազմական վերլուծության ինստիտուտի ազգամիջյան հարաբերությունների հիմնախնդիրների բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու:

Իսկապես, երկկողմ հարաբերությունների դինամիկան այսօր (հատկապես ԱՊՀ այլ երկրների հետ ՌԴ հարաբերությունների ֆոնին) տպավորիչ է: Հայաստանում գործում են ավելի քան 1000 ռուսական ձեռնարկություններ: Հայաստանի հետ համագործակցում են ավելի քան 70 ռուսաստանյան մարզեր ու հանրապետություններ, իսկ ապրանքաշրջանառությունը միայն վերջին ամիսներին աճել է գրեթե 20%-ով: Բայց միևնույն ժամանակ հազիվ թե հնարավոր է երկու երկրների հարաբերությունների ողջ համալիրը տեղավորել տնտեսության պրոկրուստյան մահճում:

Դժվար է ձեռքբազատվել այն տպավորությունից, թե Մոսկվան հիասթափվել է Երևանի երեք դիրքորոշումներից՝ անմիջականորեն Հարավային Օսիայի ռազմական կամպանիայի ընթացքում, ինչպես նաև դրանից անմիջապես հետո: Նախ՝ Հայաստանի ղեկավարությունը ձեռնպահ մնաց Ռուսաստանին միանշանակորեն աջակցելուց 2008թ. օգոստոսի 8-13-ը: Բնականաբար, Հայաստանը չքննադատեց Ռուսաստանին «ուժի անհամամասնական կիրառման» համար և չմիացավ Արևմուտքի հետ համերաշխությանը: Բայց միևնույն ժամանակ պաշտոնական Երևանը «թե՛ժ օգոստոսի» իրադարձությունները չորակեց որպես «օս ժողովրդի ցեղասպանություն» (ինչն, ի դեպ, արեցին Կրեմլում այդքան չսիրված հայ ընդդիմադիրները, թեև կասկածներ կան, թե արդյոք դա գործող իշխանության հակառակորդի կողմից գործնական քայլ չէր):

Երկրորդ, «հնգօրյա պատերազմից» հետո Երևանը ցուցադրաբար չխզեց հարաբերությունները Թբիլիսիի հետ: Ավելին, 2008թ. սեպտեմբերի 30-ին տեղի ունեցավ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի այցելությունը Վրաստանի մայրաքաղաք, որտեղ նա պարզևատրվեց վրացական շքանշանով և երախտագիտության խոսքեր լսեց «երկրի տարածքային ամբողջականության աջակցության» համար: Այն ժամանակ Միխայիլ Սահակաշվիլին հայտարարել էր. «Մենք խիստ գնահատում ենք Հայաստանի ղեկավարության դիրքորոշումը՝ Վրաստանի տարածքային ամբողջականության անսասան աջակցության հետ կապված: Հայաստանը միանշանակ, ինչպես և աշխարհի ու անմիջականորեն տարածաշրջանի շատ, գրեթե բոլոր մյուս երկրները, անսասան աջակցություն հայտնեցին Վրաստանի տարածքային ամբողջականությանը, նրա միասնությանը, հակամարտությունների խաղաղ կարգավորմանը: Նման բոլոր հարցերի շուրջ միասնությունը, համոզված եմ, ընդմիջտ կմնա ոչ միայն մեր կառավարությունների, այլև ժողովուրդների հիշողության մեջ»:

Անշուշտ, այս ամենը դիվանագիտական արարողակարգի և երկկողմ հարաբերությունների էթիկայի (հատկապես հարևան երկրների



միջև) անհրաժեշտ ու բնական տարրերն են: Սակայն Մոսկվայում դա վատ թաքնված գայրույթ առաջացրեց: Եվ, վերջապես, երրորդ՝ Երևանը (ինչպես և ՀԱՊԿ գծով Ռուսաստանի մյուս դաշնակիցները) սահմանափակվեց Հարավային Օսիայում Ռուսաստանի գործողությունների մոտիվացիային աջակցություն հայտնելով, բայց հրաժարվեց պաշտոնապես ու իրավական առումով ճանաչել վրացական երկու նախկին ինքնավարությունների անկախությունը:

Եթե խոսենք Երևանի մասին, ապա այստեղ էլ որոշակի դժգոհություն (կամ անըմբռնողություն) կա ռուսական որոշ գործողություններից: Ընդհուպ մինչև Մոսկվայի հռչակագրի ստորագրումը Կրեմլի խաղաղարար հռետորականությունը՝ ուղղված այն բանին, որ ցույց տրվի, թե պատրաստ են ոչ միայն «խաղաղություն հարկադրել», այլև լուծել հակամարտությունները, հայ փորձագիտական ու քաղաքական հանրության շրջանակներում բազմաթիվ հարցեր առաջացրին, որոնք հստակ պարզաբանումներ չստացան: Բայց այդ հարցերը մնացին նաև 2008թ. նոյեմբերի 2-ից հետո: Չի՞ ձգտի արդյոք Ռուսաստանն այն բանին, որ «մանրի» Ղարաբաղը Աբխազիայի և Հարավային Օսիայի ճանաչմամբ: Այս կասկածներն ու վախը խորանում էին նաև այն պատճառով, որ կովկասյան ուղղությամբ ակտիվանում էր Թուրքիան: Միննույն ժամանակ նկատելիորեն բարելավվեցին ռուս-թուրքական հարաբերությունները մի կողմից՝ Անկարայի և մյուս կողմից՝ ԱՄՆ ու ԵՄ հարաբերությունների բացասական դինամիկայի համատեքստում (ինչն անխուսափելիորեն ասոցիացվում է 1921թ. հետ): Հավանաբար, արդարացի կլինի հանդիմանել հայ հասարակությանը Թուրքիայի և ռուս-թուրքական հնարավոր պայմանավորվածությունների նկատմամբ իռացիոնալ վերաբերմունքի համար: Բայց ցանկացած քաղաքական գործիչ, ով աշխատում է Կովկասում (և ընդհանրապես Եվրասիայում), պետք է նկատի ունենա այդ գործոնը՝ որպես ընկալման ասիմետրիա: Այն, ինչ Մոսկվայի համար արտաքին քաղաքական PR-ի անհրաժեշտ տարր է համարվում (ՌԴ ԱԳՆ ղեկավար Սերգեյ Լավրովի հարցազրույցի թեզիսները Ղարաբաղում հակամարտության կարգավորման արագացման անհրաժեշտության մասին), Երևանի համար (պարզապես նրա բարդ աշխարհագրական և աշխարհաքաղաքական դրությունից ելնելով) լուրջ մարտահրավեր է համարվում: Հայաստանում ոչ միանշանակ են վերաբերվում նաև ռուս-ադրբեջանական հարաբերությունների ինտենսիվացմանը: Մոսկվան ակտիվորեն աջակցում էր գործող իշխանությանը 2008թ. հոկտեմբերին նախագահական ընտրությունների ընթացքում (իր որոշակի դերը խաղալով Իլիամ Ալիևի վարչակարգի միջազգային

լեգիտիմացման գործում): Շատերը Երևանում (հնարավոր է, որ դա նույնպես իռացիոնալ է և չափազանցված) «Ադրբեջանի լռությունը» «հնգօրյա պատերազմի» ժամանակ դիտարկում են որպես Մոսկվայի համաձայնության նշան՝ Ղարաբաղում խաղաղ կարգավորման ընթացքում հոգուտ Բաքվի որոշակի զիջումներ անելու:

Նշենք, որ վերը նկարագրված բոլոր խնդիրներն ակնհայտ դարձան ոչ հնգօրյա պատերազմի իրադարձություններից հետո: Ռուս-ադրբեջանական հարաբերությունների նույն ինտենսիվությունը կար նաև դեռ 2008թ. հուլիսի սկզբին, երբ Ռուսաստանի Դաշնության նախագահ Դմիտրի Մեդվեդևն այցելեց Բաքու՝ իր անդրկասպյան շրջագայության շրջանակներում: Այդ այցելության ընթացքում Մեդվեդևը չէր թաքցնում հետաքրքրվածությունը անդրկասպյան պետության հետ երկկողմ հարաբերությունների զարգացմամբ: «Ադրբեջանը մեր ռազմավարական գործընկերն է Կովկասում: Մեզ կապում են բազմադարյա պատմությունը և ներկայիս գործընկերության հատուկ բնույթը, ինչն օգնում է ամենատարբեր խնդիրները լուծելիս», - Բաքվում հայտարարել է Դմիտրի Մեդվեդևը: Մեդվեդևի հուլիսյան այցի ընթացքում ստորագրվել է Հոչակագիր ՌԴ ու Ադրբեջանի բարեկամության և ռազմավարական գործընկերության մասին, որտեղ իրենց արտացոլումն են գտել անդրկասպյան պետության արտաքին քաղաքական շատ գերակայություններ:

2008թ. օգոստոս-սեպտեմբերին չէ, որ ի հայտ են եկել նաև այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են Երևանի և Թբիլիսիի, ՆԱՏՕ-ի և ընդհանրապես Արևմուտքի (ԱՄՆ, Եվրամիություն) հատուկ հարաբերությունների ընկալումը, Ռուսաստանի դերը Ղարաբաղյան կարգավորման մեջ, հայ համայնքի դրությունը ՌԴ ներսում, ռուսական բիզնեսի դերը Հայաստանում, ռուս-ադրբեջանական գործընկերությունը հարցերի լայն շրջանակի գծով:

Ընդհանրապես, մեր կարծիքով, ռուս-հայկական երկկողմ հարաբերությունների զարգացման առանցքային խնդիրը մեկը մյուսի քաղաքականության ընկալման անհամամասնությունն է: Երևանի համար բնորոշ է Մոսկվայի դերի հիպերբոլացումը հետխորհրդային տարածքում: Այստեղից էլ Ղարաբաղի հարցում հնարավոր զիջման քննարկումը: Այնինչ, ակնհայտ է, որ զիջել կարելի է միայն այն, ինչին տիրապետում ես: Իսկ Ռուսաստանի ազդեցությունը ԼՂՀ-ի վրա այնքան էլ մեծ չէ և հազիվ թե ընդհանրապես կարելի է համեմատել Աբխազիայի ու Հարավային Օսիայի վրա ունեցած ազդեցության հետ: Ի դեպ, ԼՂՀ-ն ինքն էլ ավանդաբար հեռու էր մնում ինքնատիպ ԱՊՀ-2 դաշինքից՝ նախընտրելով իրեն դիտել Կոսովոյի կամ Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության հետ նույն

համատեքստում, ընդգծելով իր հիմնախնդրի փոխկապվածությունն էթնիկ ինքնորոշման եվրոպական քեյսերի հետ, իրեն կտրելով եվրասիական (հետխորհրդային) պրոբլեմատիկայից: Հետևաբար, «Մոսկվայի ձեռքը» Ղարաբաղում գերազնահատելը հազիվ թե պրագմատիկ հիմքեր ունի: Եվ այդ հիմքերը հազիվ թե դուրս են գալիս ստատուս քվոյի սահմաններից, ինչը խտացված կերպով արտացոլվել է 2008թ. նոյեմբերի 2-ի Մոսկվայի հռչակագրում:

Ռուսաստանի համար, որը ոչ միայն տարածաշրջանային աշխարհաքաղաքական խաղի, այլ նաև Արևմուտքի հետ «Մեծ խաղի» մեջ է ընդգրկված (համենայնդեպս, փորձեր են արվում ներկա իրադարձություններն այդպես ներկայացնել), ռազմավարական դաշնակիցների հետ փոխհարաբերությունները չեն թերազնահատվում: Նախ՝ ինչպես եղել է ու կա նախկին ԽՍՀՄ երկրների հետ հարաբերություններում, իր դերն ունի վստահությունը խորհրդային ինտեգրացիայի նկատմամբ, ինչը «լուռ համաձայնությամբ» թույլ է տալիս Մոսկվային պահպանել առաջատար դիրքերը: Երկրորդ՝ համոզմունք կա, որ բոլոր արժանիքները (այս պարագայում՝ առանց որևէ հեզնանքի, խոսքը վերաբերում է ՌԴ իսկական արժանիքների մասին, այնպիսիք, ինչպիսին են մոբիլ կապի ցանցի, երկաթուղային տրանսպորտի զարգացումը և անվտանգության երաշխիքները) ավտոմատ կերպով «մեծ տերությանն» իրավունք են տալիս այնքան էլ հաշվի չնստել իր ռազմավարական դաշնակցի կարծիքի հետ: Իրականում, ի՞նչ կկորցնեն Ռուսաստանը, եթե հրապարակային խորհրդատվություններ անցկացնեն իր դաշնակիցների հետ, ներառյալ Հայաստանը, Հարավային Կովկասում գործողությունների առնչությամբ ոչ թե սեպտեմբերին, ՀԱՊԿ մոսկովյան գագաթաժողովում, այլ «թեժ օգոստոսի» օրերին: Կրեմլը, ամենայն հավանականությամբ, միահամուռ աջակցության չէր արժանանա, բայց ինչ-որ նվազագույն, ՌԴ-ին ձեռնտու ձևակերպումներ կլինեին: Ընդ որում՝ կատեղծվեր իրական գործընկերության զգացողություն ոչ միայն ընդամենը մայրաքաղաքի կարծիքի հաշվառմամբ: Նույնը վերաբերում է նաև ռուսական բիզնեսի կողմից Հայաստանի «յուրացմանը»: Անշուշտ, ռուսական բիզնեսը ներդրումներ է բերում երկիր, որոնք չես համեմատի այլ պետությունների բերածի հետ: Բայց ռուսական ընկերությունների գործունեության թափանցիկություն չկա, գործարքները կրում են կուլուարային բնույթ (դրանք գոնե կարելի էր մի փոքր «բացել», հատկապես եթե խոսքը վերաբերում է տնտեսության ռազմավարական առումով կարևոր ճյուղերին): Երրորդ՝ դաշնակցային հարաբերությունները ենթադրում են որակապես նոր մոտեցում ՌԴ հայ համայնքին: Այստեղ ևս մենք կրկին վերադառնում

ենք ընկալման ասիմետրիայի խնդրին: Մեծ Ռուսաստանի համար այս կամ այն նահանգապետի ելույթները (Ճիշտ այնպես, ինչպես և այլատյացության հրապարակումները կամ էլ հայտարարությունները ՁԼՄ-ում) այնպիսի դեր չեն խաղում, ինչպես փոքր Հայաստանի համար, որտեղ դրանք, որպես կանոն, գերազնահատվում են և չափից ավելի հուզականորեն դիտարկվում:

Մեծ Կովկասում և Մոսկվայում նոր ստատուս քվոյի ձևավորման պայմաններում Երևանը նույնպես պետք է ավելի իրատեսական լինի մեկը մյուսի մոտիվները գնահատելիս, հրաժարվի չափից ավելի մեծ ակնկալիքներից (հետո տանջալի հիասթափություն չապրելու համար): Այսօր պետք է իբրև եղելություն ընդունել այն, որ ո՛չ Մոսկվան կընդունի ԼՂՀ անկախությունը, ո՛չ Երևանը կանի դա երկու նախկին վրացական ինքնավարությունների պարագայում: Կրեմլը չի հրաժարվի համագործակցել Բաքվի հետ, վերջնական ընտրություն չի կատարի Հայաստանի և Ադրբեջանի միջև: Բայց Երևանն էլ չի հրաժարվի շահավետ փոխգործակցությունից Արևմուտքի և հենց նույն Վրաստանի հետ (որի տարածքով է անցնում Հայաստանի արտաքին առևտրի գրեթե 2/3-ը): Ի վերջո, աշխարհագրությունը չեն ընտրում: Թուրքիայի և Ադրբեջանի ցամաքային շրջափակման պայմաններում Հայաստանի համար միայն Վրաստանն ու Իրանն են դեպի աշխարհ տանող պատուհանները: Այս առումով, հատկանշական է ԱՄՆ օրինակը, որը փաստորեն այք է փակում Իրանի հետ Հայաստանի համագործակցության վրա (ուրիշ էլ ի՞նչ է մնում անելու նման բարդ քաղաքական աշխարհագրության պայմաններում): Այսպիսով, երկու երկրների դիվանագետների գերխնդիրը կարող էր դառնալ բարդ հարցերի պարզաբանումը, փոխադարձ կասկածների, վախի, անըմբռնողության ցրումը: Նման գործողությունների ամբողջությունը կարելի էր բնորոշել որպես ինքնատիպ հոգեբանական լիցքաթափում: ԽՍՀՄ փլուզումից հետո անցած 17 տարիների ընթացքում երկու երկրները քիչ չեն շահել փոխհամագործակցությունից: Այսօր գլխավորը այդ շահն ամրապնդելն է՝ դեն նետելով անպետք խանդն ու հույզերը և ուշադրության առնելով գործընկերոջ իրական մոտիվները: Եվ, բնականաբար, օբյեկտիվ սահմանափակիչները, որոնք գոյություն ունեն և՛ ՌԴ-ի, և՛ Հայաստանի համար:

«ԳԼՈՒԲՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ»  
ԱՄՍԱԳԻՐ

Խմբագրական խորհուրդ

Հայաստանի Հանրապետություն, 0026, Երևան, Գարեգին Նժդեհի 23/1

Կայք՝ [www.noravank.am](http://www.noravank.am)

Էլ.-փոստ՝ [21dar@noravank.am](mailto:21dar@noravank.am), [office@noravank.am](mailto:office@noravank.am)

Հեռախոս՝ + (374 10) 44 38 49, + (374 10) 44 38 46

Ֆաքս + (374 10) 44 04 73

Էլեկտրոնային շարվածքը՝ Տաթևիկ Քարատուղլանյանի

Հանձնված է տպարան 26.02.2009թ.

Հիմնադիր՝ «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ

Ֆորմատը՝ 70x100 1/16

Պայմանական 15 մամուլ: Տպաքանակը՝ 99:

Տառատեսակը՝ Sylfaen

Տպագրվել է «Գասպրինտ» ՍՊԸ տպարանում